

3 Մայիսի 2006 թ.

CM(2006)85

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽԱՐՏԻԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԿԱՄ
ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՓՈՐՁԱԳԵՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵԻ Ի ԶԵԿՈՒՅՑ

Ընդունվել է 2006 թվականի Մայիսի 12-ին

- Ա. Խարտիայի Փորձագետների կոմիտեի ղեկույցը
- Բ. Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարականը
Հայաստանում Խարտիայի կիրառման վերաբերյալ
- Գ. Փորձագետների կոմիտեի կողմից ներկայացրած ղեկույցի ՀՀ կառավարության
մեկնաբանությունները

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ Եվրոպական խարտիան նախատեսում է վերահսկման մեխանիզմ՝ գնահատելու համար, թե ինչպես է խարտիան կիրառվում մասնակից երկրներում՝ նպատակ ունենալով անհրաժեշտության դեպքում հանձնարարականներ տալ բարելավելու նրանց օրենսդրությունը, քաղաքականությունը և պրակտիկ գործունեությունը: Այս ընթացակարգի կենտրոնական բաղադրիչը Փորձագետների կոմիտեն է՝ հաստատված խարտիայի 17-րդ հոդվածի համաձայն: Նրա գլխավոր նպատակն է քննել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների իրական դրությունը երկրում՝ զեկուցելու համար Նախարարների կոմիտեին՝ ինչպես է նա գնահատում Մասնակից երկրի կողմից պարտավորությունների կատարումը և, որտեղ հնարավոր է, խրախուսել Մասնակից երկրին՝ աստիճանաբար հասնելու կատարման ավելի բարձր մակարդակի:

Այս խնդիրը հեշտացնելու նպատակով Նախարարների կոմիտեն Հոդված 15.1-ի համապատասխան ընդունել է պարբերական զեկույցների նախագիծ, որ Մասնակիցը պետք է ներկայացնի Գլխավոր քարտուղարին: Ձեկույցը պետք է հրապարակվի տվյալ երկրի կառավարության կողմից: Այս նախագիծը պահանջում է Երկրից հաշվետվություն տալ խարտիայի կոնկրետ կիրառման, խարտիայի Երկրորդ մասով հովանավորվող լեզուների նկատմամբ ընդհանուր քաղաքականության և, ավելի որոշակի, այն բոլոր միջոցառումների մասին, որոնք ձեռնարկվել են խարտիայի Երրորդ մասով հովանավորվող յուրաքանչյուր լեզվի համար ընտրված դրույթների կիրառման ուղղությամբ: Հետևաբար, Կոմիտեի առաջին խնդիրն է քննել պարբերական զեկույցում պարունակվող տեղեկատվությունը տվյալ երկրի տարածքում բոլոր համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ:

Կոմիտեի դերն է գնահատել յուրաքանչյուր երկրում գոյություն ունեցող իրավական ակտերը, կանոնակարգերը և իրական գործնական կիրառումները իր տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների նկատմամբ: Այն համապատասխանաբար սահմանել է իր աշխատանքային մեթոդները: Կոմիտեն տեղեկատվություն է հավաքում երկրի համապատասխան մարմիններից և անկախ աղբյուրներից՝ նպատակ ունենալով ձեռք բերել ճշգրիտ և հավաստի պատկերացում իրական լեզվական իրադրության մասին: Պարբերական զեկույցի նախնական քննությունից հետո Կոմիտեն անհրաժեշտության դեպքում տվյալ Մասնակցին հարցեր է առաջադրում իր կարծիքով զեկույցի մեջ ոչ հստակ կամ ոչ բավարար պարզաբանված խնդիրների վերաբերյալ: Այս գրավոր ընթացակարգին սովորաբար հաջորդում է Կոմիտեի պատվիրակության այցելություն «ի տեղվույն»՝ նշված երկիր: Այցելության ընթացքում պատվիրակությունը հանդիպում է այն մարմինների և կազմակերպությունների հետ, որոնց աշխատանքը սերտորեն առնչվում է համապատասխան լեզուների գործածությանը և խորհրդակցում է իշխանությունների հետ իրենց ուշադրությանը ներկայացված խնդիրների մասին:

Ամփոփելով այս գործընթացը՝ Փորձագետների կոմիտեն կազմում է իր սեփական զեկույցը: Այդ զեկույցը առաջարկվող հանձնարարականների հետ միասին ներկայացվում է Նախարարների կոմիտեին՝ որը կարող է որոշել դրանք ուղղել տվյալ Մասնակցին:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ա. Փորձագետների կոմիտեի զեկուլցր Հայաստանում Խարտիայի կիրառման մասին

Գլուխ 1 Ներածական տեղեկատվություն և ընդհանուր/նախնական հարցեր

- 1.1. Խարտիայի վավերացումը Հայաստանի Հանրապետության կողմից
- 1.2. Փորձագետների կոմիտեի աշխատանքը
- 1.3. Հայաստանում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների իրադրության ներկայացումը
- 1.4. Հայաստանում Խարտիայի կիրառման գնահատումից բխող հատուկ հարցեր

Գլուխ 2 Փորձագետների կոմիտեի գնահատումը Խարտիայի Երկրորդ և Երրորդ մասերի վերաբերյալ

- 2.1. Գնահատում Խարտիայի Երկրորդ մասի վերաբերյալ
- 2.2. Գնահատում Խարտիայի Երրորդ մասի վերաբերյալ

Գլուխ 3 Եզրահանգումներ

Հավելված I Վավերացման փաստաթուղթը

Հավելված II Հայաստանի իշխանությունների մեկնաբանությունները

Բ. Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականը Հայաստանում Խարտիայի կիրառման վերաբերյալ

Ա. Փորձագետների կոմիտեի զեկույցը Հայաստանում Խարտիայի կիրառման մասին

ընդունված է Փորձագետների կոմիտեի կողմից 2005 թ. նոյեմբերի 25-ին
և ներկայացված է Եվրախորհրդի Նախարարների կոմիտեին Խարտիայի 16-րդ հոդվածի
համաձայն

Գլուխ 1. Ներածական տեղեկատվություն

1.1. Խարտիայի վավերացումը Հայաստանի Հանրապետության կողմից

1. Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է Տարածաշրջանային լեզուների վերաբերյալ Եվրոպական խարտիան (այսուհետև՝ Խարտիա) 2001 թ. մայիսի 11-ին և ներկայացրել ի պահ իր վավերացման փաստաթուղթը 2002 թ. հունվարի 25-ին: Խարտիան Հայաստանի Հանրապետությունում ուժի մեջ է մտել 2002 թ. մայիսի 1-ից:

2. Վավերացման փաստաթուղթը ներկայացվում է սույն զեկույցի Հավելված I -ում:

3. Խարտիայի Հոդված 15.1-ի համաձայն Հայաստանի Հանրապետությունը Խարտիայի կիրառման մասին իր առաջին պարբերական զեկույցը Եվրախորհրդի Գլխավոր քարտուղարին ներկայացրել է 2003 թ. սեպտեմբերի 3-ին: Ազգային զեկույցները պետք է հրապարակվեն համաձայն Խարտիայի Հոդված 15-ի երկրորդ կետի: **Փորձագետների կոմիտեն 2004 թ. սեպտեմբերին Հայաստան կատարած «ի տեղվույն» այցելության ընթացքում (տես ստորև՝ կետ 4) տեղեկացվել է, որ զեկույցը հրապարակվել է կառավարության պաշտոնական վեբ կայքում (www.gov.am), ինչպես նաև ուղարկվել է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողներին ներկայացնող ոչ պետական կազմակերպություններին: Սակայն մի շարք կազմակերպություններ տեղյակ չեն եղել զեկույցին և այն ստացել են Եվրախորհրդի և Երևանի պետական լեզվաբանական համալսարանի կազմակերպած՝ Խարտիային նվիրված տեղեկատվական սեմինարի ժամանակ, որը նախորդել էր «ի տեղվույն» այցելությանը:**

1.2. Փորձագետների կոմիտեի աշխատանքը

4. Փորձագետների կոմիտեի կողմից առաջին պարբերական զեկույցի նախնական քննությունից հետո կազմվել է հարցաշար և ուղարկվել Հայաստանի Հանրապետության իշխանություններին: Փորձագետների կոմիտեն կազմակերպել է «ի տեղվույն» այցելություն Հայաստան 2004 թ. սեպտեմբերին: Այդ այցելության ընթացքում Փորձագետների կոմիտեի պատվիրակությունը եղել է Ջովուսի (Կոտայքի մարզ՝ եզդիներ), Ֆերիկ (Արմավիրի մարզ՝ եզդիներ), Վերին Դվին և Դիմիտրով (Արարատի մարզ՝ ասորիներ) գյուղերում: Տեղի են ունեցել նաև հանդիպումներ Երևանում տեղական ինքնակառավարման մարմինների, ազգային փոքրամասնությունների միությունների ներկայացուցիչների և պետական մարմինների (Նախագահի վարչակազմի, Արտաքին գործերի նախարարության, Արդարադատության նախարարության, Կրթության և գիտության նախարարության, Մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարության, Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության, կառավարության Ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության, Հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի, Օմբուդսմենի գրասենյակի) հետ¹:

5. Խարտիայի Հոդված 16.4-ի համաձայն Փորձագետների կոմիտեն կազմել է հանձնարարականների նախապատրաստման համար ընդհանուր առաջարկությունների ցուցակ, որը Նախարարների կոմիտեն կարող է ուզենալ ուղղել Հայաստանի Հանրապետությանը (տես սույն զեկույցի 3.2 գլուխը): Փորձագետների կոմիտեն նաև ըստ անհրաժեշտության կատարել է զեկույցի հիմնական մասի ավելի մանրամասն դիտարկումներ: Կոմիտեն խրախուսում է Հայաստանի Հանրապետության իշխանություններին նկատի առնել այս դիտարկումները տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների նկատմամբ իրենց քաղաքականությունը մշակելիս:

6. Սույն զեկույցը հիմնված է Հայաստանի Հանրապետությունում 2002 թ. մայիսին Խարտիան ուժի մեջ մտնելու ժամանակ տիրող քաղաքական և իրավական իրադրության, Եվրախորհրդին

¹ Կոմիտեի պատվիրակությունը հանդիպումներ է ունեցել նաև բելոռուս, ուկրաինացի, գերմանացի, լեհ և հրեա փոքրամասնությունները ներկայացնող ոչ կառավարական կազմակերպությունների հետ:

կառավարության կողմից իր առաջին պարբերական զեկույցում (2003 թ. սեպտեմբեր) ներկայացված տեղեկատվության և 2004 թ. սեպտեմբերին կայացած «ի տեղվույն» այցելության ընթացքում ստացված լրացուցիչ տեղեկատվության վրա: Ձեկույցն ընդունված է 2005 թ. նոյեմբերի 25-ին:

1.3. Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների իրադրության ներկայացումը

7. Հայաստանի Հանրապետության պետական վիճակակազրական ծառայության պաշտոնական վեբ կայքը 2001 թ. հոկտեմբերի մարդահամարի տվյալներից տրամադրում է հետևյալ տեղեկատվությունը : Հայաստանի հանրապետության ամբողջ բնակչությունը կազմում է 3 213 011 մարդ, որից`

3.139.152-ը իրենց մայրենի լեզուն համարել են հայերենը,
31.799-ը իրենց մայրենի լեզուն համարել են եզդիերենը,
29.563-ը իրենց մայրենի լեզուն համարել են ռուսերենը,
818-ը իրենց մայրենի լեզուն համարել են ուկրաիներենը,
11.679-ը իրենց մայրենի լեզուն համարել են որևէ այլ լեզու:

8. Այս տեղեկատվությունը թվեր չի պարունակում ասորերենի, քրդերենի և հունարենի կամ Հայաստանի Հանրապետության այլ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ: Իշխանությունները իրենց առաջին պարբերական զեկույցում հավելյալ տեղեկատվություն են տրամադրել բնակիչների քանակի մասին ըստ ազգային պատկանելության: Այդ թվերը կարող են որոշ ցուցմունքներ տալ բնակիչների քանակի մասին, որոնց մայրենի լեզուն ասորերենն է, քրդերենը կամ հունարենը:

ասորիներ – 3500` ամբողջ բնակչության 0,11 %-ը
քրդեր – 1600` ամբողջ բնակչության 0,05 %-ը
հույներ – 1300` ամբողջ բնակչության 0,04 %-ը

9. Ազգային փոքրամասնությունների պաշտպանության Շրջանակային Կոնվենցիայի 25-րդ հոդվածի 1 կետի համաձայն 2004 թ. նոյեմբերի 24-ին ստացված Հայաստանի ներկայացրած երկրորդ զեկույցի տվյալներով «Հայաստանի Հանրապետության բնակչության էթնիկական կառուցվածքը ըստ 2001 թ. մարդահամարի հետևյալն է.

ամբողջը` 3.213.011 որից`
հայեր` 3.145.354
ասորիներ` 3.409
եզդիներ` 40.620
հույներ` 1.176
ռուսներ` 14.660
ուկրաիներ` 1.633
քրդեր` 1.519
այլ` 4.640:

10. Շրջանակային Կոնվենցիայի զեկույցում ներկայացված թվերը տարբերվում են Խարտիայի զեկույցի մեջ ներկայացված թվերից: Սրա պատճառն այն է, որ հայտարարագրված ազգային պատկանելությունը անհրաժեշտաբար չի համընկնում մայրենի լեզվի հետ, օրինակ` էթնիկական շատ հույներ իրենց մայրենի լեզուն համարել են ռուսերենը:

11. Իշխանությունները ներկայացրել են նշված լեզուների Հայաստանում ի հայտ գալու մասին հետևյալ տեղեկատվությունը.

- **եզդիախոսները Հայաստան են ներգաղթել Իրանից և Միջագետքից: Նրանք գրադաշտական են: Նրանց մեծամասնությունը ապրում է գյուղական վայրերում Երևանի շրջանում:**

- ռուսերեն խոսողների մի խումբը արտաքսվել է Ռուսաստանից 19-րդ դարի ընթացքում, քանի որ նրանք պատկանել են «աղանդավորական շարժմանը» Ռուս ուղղափառ եկեղեցու դեմ: **Նրանք ապրում են հոծ խմբերով Հայաստանի Հանրապետության տարբեր մասերում:** Ռուսախոսների մի այլ խումբ բնակություն է հաստատել Հայաստանում սովետական շրջանում: Նրանք ապրում են գլխավորապես Երևանում և Գյումրիում (մեծությամբ երկրորդ քաղաքը):

- ասորիախոսները Հայաստան են ներգաղթել **Միջագետքից 19-րդ դարի սկզբում:** Որոշ խմբեր ներգաղթել են առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում: Հայաստանում

ապրող ասորիների գրեթե կեսը պատկանում է Արևելքի առաքելական կաթոլիկ ասորական եկեղեցուն, իսկ մյուսները Ռուս ուղղափառ եկեղեցուն: **Նրանք ապրում են գլխավորապես Երևանում ու նրա շրջակայքում և Արարատի մարզի երկու գյուղերում:**

- հունախոսները գաղթել են Թուրքիայից 1763 թ., իսկ որոշ խմբեր՝ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին: Նրանք ապրում են Երևանում և Հայաստանի տարբեր մասերում: Նրանք ուղղափառ են:

- քրդախոսները ներգաղթել են Իրանից և Միջագետքից: Նրանք մահմեդականներ և գրադաշտականներ են: Ապրում են Հայաստանի տարբեր վայրերում:

12. Առաջին պարբերական զեկույցում իշխանությունները մատնանշել են, որ «որոշ անհատներ գիտեն բելոռուսերեն, ուկրաիներեն, վրացերեն, գերմաներեն, լեհերեն, եբրայերեն»: Սակայն առաջին զեկույցը այս լեզուների վերաբերյալ տեղեկություններ չի պարունակում: «Ի տեղվույն» այցելության ժամանակ փորձագետների կոմիտեն հանդիպումներ ունեցավ գերմաներեն, եբրայերեն, լեհերեն, ուկրաիներեն, բելոռուսերեն և իդիշ լեզվով խոսողների հետ, սակայն ի վիճակի չէրավարար տեղեկատվություն ձեռք բերելու այս լեզուների մասին և հետևաբար հնարավորություն չունեցավ դրանք լիակատար ներկայացնելու սույն զեկույցում: **Հայաստանի իշխանություններին պետք է խորախուսել հավելյալ տեղեկություններ տրամադրելու հաջորդ պարբերական զեկույցում:**

1.4. Հայաստանի հանրապետությունում խարտիայի կիրառման գնահատումից բխող մասնավոր հարցեր

13. Հայերենից բացի ռուսերենը երկրորդ լեզուն է, որ լայնորեն տարածված է Հայաստանի Հանրապետությունում թե՛ հայերի, թե՛ ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մեջ: Սա այն փաստի հետևանքն է, որ Հայաստանը մաս էր կազմում Ռուսական Կայսրության և ապա Սովետական Միության, և ռուսերենն այդ ժամանակ պաշտոնական լեզու էր և մեծ չափով գործածվում էր որպես միջմշակութային հաղորդակցման լեզու տարբեր լեզուներ գործածող խմբերի միջև: Բացի այդ տեղի էին ունենում անցումներ այլ լեզուներից ռուսերենին:

14. 1939-ից մինչև 1989 թ. եզդիները դիտվում էին որպես քրդեր, և բոլոր պաշտոնական փաստաթղթերում և կրթական ու մշակութային հաստատություններում միայն քրդերենն էր նշվում: Անկախությունից հետո էթնիկական և լեզվական պատկանելությունը սկսեց հենվել անհատ անձանց հայտարարության վրա: 40620 անձ իրեն համարեց եզդի և 1519 անձ՝ քուրդ: Իրականում երկու համայնքներն էլ խոսում են քուրմանջի լեզվի նույն տարբերակով: Սակայն ներկայումս երկու համայնքները չեն համաձայնում ընդհանուր անվանման, որի պատճառով էլ Հայաստանի իշխանությունները խարտիայի վավերացման ժամանակ քրդերենը և եզդիերենը ճանաչել են որպես առանձին լեզուներ: Քրդերը լեզվի գրավոր ձևի համար լատինական գրի ընդունման ճանապարհին են, իսկ եզդիները շարունակում են գործածել կիրիլյան գիրը:

15. Սահմանադրությունը և մի շարք օրենքներ համապատասխանում են խարտիայի կիրառմանը տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուների նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում, մասնավորապես՝

- Սահմանադրությունը,
- Լեզվի մասին օրենքը,
- Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքը,
- Քաղաքացիական օրենսգիրքը,
- Քաղաքացիական դատավարության օրենսգիրքը,
- Քրեական դատավարության օրենսգիրքը,
- Մշակութային օրենսդրության սկզբունքների մասին օրենքը,
- Աշխարհագրական անվանումների մասին օրենքը,
- Վարչատարածքային բաժանման մասին օրենքը,
- Կրթության մասին օրենքը,
- Կրոնական կազմակերպությունների և խղճի ազատության մասին օրենքը,
- Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքը:

16. Կառավարությունն ընդունել է «Լեզվաքաղաքականության պետական ծրագիր», որը սահմանում է Հայաստանի պետության սկզբունքներն ու առաջնահերթությունները թե՛ հայերենի, թե՛ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ:

17. Վավերացման փաստաթուղթը կազմված է այն ձևով, որ ապահովվի պաշտպանության նույն մակարդակը Խարտիայի Երրորդ մասով նախատեսված բոլոր լեզուների համար: **Սակայն Խարտիան այնպես է կառուցված, որ պետությունը կարող է տարբեր լեզուների պաշտպանությունը հարմարեցնել յուրաքանչյուր լեզվի իրական վիճակին:** Դա իսկապես սկզբունքորեն հաստատում է Զոդված 2.2.-ով յուրաքանչյուր պետությանը ընձեռվող հնարավորությունը՝ ընտրություն կատարելու Երրորդ մասով նախատեսված դրույթներից: Դա հստակ ձևակերպված է Խարտիայի բացատրական զեկույցի 43-րդ կետում, որը մատնանշում է, որ տվյալ պետությունն է որոշելու, թե Երրորդ մասի որ կետերը պետք է կիրառվեն յուրաքանչյուր առանձին լեզվի նկատմամբ:

Գլուխ 2 - Փորձագետների կոմիտեի գնահատումը Խարտիայի Երկրորդ և Երրորդ մասերի վերաբերյալ

18. Խարտիայի բնագիրը, երբ այն վերցվում է վավերացման փաստաթղթի հետ միասին, մատնանշում է ճշգրիտ պարտավորություններ, որոնք կիրառվում են Խարտիայով նախատեսված տարբեր լեզուներին համապատասխան: Զետևաբար Փորձագետների կոմիտեն գնահատել է, թե ինչպես է Պետությունը իրականացրել Երկրորդ մասի (Զոդված 7) և Երրորդ մասի (Զոդվածներ 8-14) յուրաքանչյուր պարտավորությունը, օգտագործելով վավերացման փաստաթղթում սահմանված կետերն ու ենթակետերը:

2.1. Գնահատում Խարտիայի Երկրորդ մասի վերաբերյալ

19. Խարտիայի Երկրորդ մասը (Զոդված 7) ներկայացնում է մի շարք ընդհանուր նպատակներ և սկզբունքներ, որ Մասնակիցը պարտավոր է կիրառել իր տարածքի բոլոր տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների նկատմամբ: Ինչպես նախապես նշվել է, Զայաստանի իշխանությունները առաջին պարբերական զեկույցում մատնանշել են, որ «Խարտիայի հասկացությամբ չկան տարածաշրջանային կամ ոչ-տարածքային լեզուներ, այլ միայն փոքրամասնությունների լեզուներ»:

Ասորերենը, եզդիերենը, հունարենը, ռուսերենը և քրդերենը նույնպես պետք է դիտարկվեն ըստ Երրորդ մասի: Քանի որ առաջին պարբերական զեկույցի մեջ չի ընդգրվել Զայաստանի Զանրապետությունում այլ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին վերաբերող տեղեկատվությունը, որի համաձայն դրանք կարող էին դիտարկվել ըստ Երկրորդ մասի, այդ լեզուների վերաբերյալ տեղեկությունների գլխավոր աղբյուրը «ի տեղվում» այցելության ժամանակ հավաքված տվյալներն են: Ուստի Փորձագետների կոմիտեն այդ լեզուների իրադրության լիակատար պատկերը չունի և խրախուսում է իշխանություններին լրացուցիչ տեղեկատվություն տրամադրել հաջորդ պարբերական զեկույցում:

Զոդված 7. Նպատակներ և սկզբունքներ

«Կետ 1

Որոշակի տարածքներում գործածվող տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների առնչությամբ և յուրաքանչյուր լեզվի կարգավիճակին համաձայն՝ Կողմերը կհիմնեն իրենց քաղաքականությունը, օրենսդրությունը և փորձառությունը հետևյալ նպատակների և սկզբունքների վրա.

ա. տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ճանաչումը որպես մշակութային հարստության արտահայտություն»

20. Սահմանադրության 37-րդ հոդվածը հետևյալն է. «Ազգային փոքրամասնություններին պատկանող քաղաքացիները ունեն իրենց ավանդույթների պահպանման, լեզվի և մշակույթի զարգացման իրավունք»:

21. Այնուհետև, Լեզվի մասին օրենքի Զոդված 1-ի համաձայն «Զայաստանի Զանրապետությունը երաշխավորում է փոքրամասնությունների լեզուների գործածությունը իր տարածքում». իշխանությունները նաև տեղեկացրել են Փորձագետների կոմիտեին, որ նշված օրենքի 2-րդ և 4-րդ հոդվածներում նույնպես դրույթներ կան ազգային փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ: **Սակայն Փորձագետների կոմիտեն տեղյակ չէ որևէ պաշտոնական բնագրի, որտեղ առանձին տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների տրված լինե՞ր հատուկ ճանաչում:**

22. Եվ վերջապես, համաձայն իրենց առաջին պարբերական զեկույցում իշխանությունների տրամադրած տեղեկատվության «լեզվաքաղաքականության պետական ծրագիրը» փոքրամասնությունների լեզուները ճանաչում է որպես «Հայաստանի լեզվի և մշակույթի անկապտելի մաս» և «արժեք»: Ծրագրում նաև նշվում է, որ «այս լեզուների սատարումը հույժ կարևոր է (Հայաստանի) ժողովրդավարացման և քաղաքացիական հասարակության զարգացման գործում»:

«բ. տարածաշրջանային կամ փոքրամասնության յուրաքանչյուր լեզվի աշխարհագրական տարածքի ընդունումը՝ երաշխավորելու համար, որ առկա կամ նոր վարչական բաժանումները չեն խոչընդոտում տվյալ տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվի զարգացմանը»

23. «Ի տեղվույն» այցելության ընթացքում հավաքած տեղեկատվությունից որևէ փաստ չի ստացվել այն մասին, որ գոյություն ունեցող վարչական բաժանումը որևէ խոչընդոտ է հարուցել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների զարգացման համար: Ըստ իշխանությունների՝ ներկա ժամանակաընթացքում երկրի վարչական բաժանումը փոխելու պլաններ չկան: Ավելին, Աշխարհագրական անվանումների մասին օրենքի համաձայն վարչական բաժանումները չպետք է փոխվեն առանց համապատասխան բնակչության հետ նախապես խորհրդակցելու:

24. Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է «օպտիմալացման ծրագիր» կոչվող կրթական բարեփոխումների ծրագրի մասին, որը սկսվել է իր առաջին զեկույցը Հայաստանի Հանրապետության կողմից ներկայացնելուց հետո: «Օպտիմալացման ծրագիրը» բացասական ազդեցություն կարող է ունենալ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների պաշտպանության վրա, հատկապես փոքր գյուղերի դպրոցների և դասարանների փակման առումով: Այս խնդրին պետք է անդրադառնալ III մասի ներքո:

«գ. տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին աջակցելու համար վճռական գործողությունների դիմելու անհրաժեշտությունը՝ դրանք պաշտպանելու համար»

25. Փորձագետների կոմիտեն հավաստել է, որ «Լեզվաքաղաքականության ծրագիրը» ընդունվել է կառավարության կողմից՝ մի շարք նախաձեռնություններ արմատավորելու նպատակով, որոնք են՝

«- լիակատար աջակցություն ազգային փոքրամասնությունների լեզուների պահպանմանն ու զարգացմանը.

- աջակցություն ազգային փոքրամասնությունների միջև արդյունավետ լեզվական հաղորդակցմանը և փոխադարձ ըմբռնմանը.

- աջակցություն ազգային փոքրամասնությունների լեզուների ուսուցիչների պատրաստմանն ու վերապատրաստմանը.

- ազգային փոքրամասնությունների լեզուների դասագրքերի և հրատարակման ծրագրեր ստեղծելու և իրագործելու հնարավորության քննարկում»:

26. Սակայն բացի ուսուցումից այս ծրագրի մեջ մտնող գործողությունների որևէ կոնկրետ օրինակ իշխանությունները չեն տրամադրել, ուստի Փորձագետների կոմիտեն կցանկանար հաջորդ զեկույցում ավելի շատ տեղեկություններ ստանալ այս խնդրի վերաբերյալ: /օրինակ՝ սահմանադրության թարգմանությունը եզրինեքննով/

«դ. տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածման հեշտացումը և/կամ խրախուսումը բանավոր և գրավոր խոսքի մեջ, հասարակական կամ անձնական կյանքում»

27. Ինչ վերաբերում է ուկրաիներենին, Երևանում Հայաստանի կառավարության կողմից ֆինանսավորվում և հրատարակվում է երկլեզվյան (ուկրաիներեն-հայերեն) թերթ: Թերթը պարունակում է լուրեր Ուկրաինայից, իսկ թերթի մի հատվածը նվիրված է ուկրաիներենին:

Ջրատարակվում է լեհական ամսագիր երեք լեզվով (լեհերեն, հայերեն և ռուսերեն): Ջրատարակումներ կան նաև բելոռուսերեն և գերմաներեն: Տեղի են ունեցել մի շարք փառատոներ, որոնք ուշադրություն են հրավիրել փոքրամասնությունների մշակույթների և լեզուների (վրացերենի, եբրայերենի-իդիշի, բելոռուսերենի, լեհերենի, գերմաներենի, ուկրաիներենի) վրա: Ընձեռված տեղեկատվության համաձայն այս գործունեությունը պետական ֆինանսավորում է ստացել Յայաստանի իշխանությունների և համապատասխան ազգակից երկրների կողմից: Փորձագետների կոմիտեն խրախուսում է իշխանություններին հաջորդ գեկույցում ավելի շատ տեղեկություններ տրամադրել այս ձեռնարկումների վերաբերյալ:

«ե. սույն խարտիայում ընդգրկված բնագավառներում կապերի պահպանումն ու զարգացումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ գործածող խմբերի և միանման կամ նույնանման ձևով լեզուն գործածող պետության այլ խմբերի միջև, ինչպես նաև մշակութային կապերի հաստատումը այդ պետության մյուս խմբերի միջև, որոնք գործածում են տարբեր լեզուներ»

28. Ազգային փոքրամասնությունների կողողինացիոն խորհուրդը հիմնադրվել է 2000 թ., որտեղ ներկայացված են բոլոր ազգային փոքրամասնությունները: Այն համագործակցում է իշխանությունների հետ խորհրդակցական հիմունքներով: Այն նաև ստանում է բաշխում է ազգային փոքրամասնություններին հատկացված ֆոնդերը: Խորհրդում ներկայացված են գերմաներեն, իդիշ, բելոռուսերեն, ուկրաիներեն, վրացերեն և լեհերեն խոսողները:

«գ. համապատասխան մեթոդների և միջոցների ապահովումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների դասավանդման և ուսուցման համար՝ բոլոր համապատասխան փուլերում»

29. «Ի տեղվույն» այցելության ժամանակ Փորձագետների կոմիտեն ստացել է հետևյալ տեղեկատվությունը Երրորդ մասի տակ չընկնող լեզուներով կրթության վերաբերյալ:

30. Գերմաներեն – Երևանում երկու դպրոց հնարավորություն են ընձեռում գերմաներեն սովորելու, և երեխաների համար կազմակերպվել են կիրակնօրյա դպրոցներ: Դասագրքերն ուղարկվում են Գերմանիայից: Գերմաներենը ուսուցանվում է համալսարանների մեծ մասում և գերմաներենի ուսուցման և ուսումնասիրության համար հատուկ ֆակուլտետներ կան Երևանի պետական համալսարանում և Երևանի պետական լեզվաբանական համալսարանում:

31. Իդիշ – այս լեզվով խոսում են ավագ սերնդին պատկանող մոտավորապես 50-60 մարդ: Երիտասարդ սերունդը ավելի հակված է սովորելու եբրայերեն, և կազմակերպվել են եբրայերենի դասընթացներ երեխաների ու մեծահասակների համար, թեև կան ֆինանսական խնդիրներ: Իսրայելը տրամադրում է դասագրքեր:

32. Ուկրաիներեն – երեխաների համար կազմակերպվել է կիրակնօրյա դպրոց (շաբաթական երկու ժամ), որտեղ սովորեցնում են ուկրաիներեն, պատմություն և գրականություն՝ օգտվելով ուկրաինայից ուղարկված դասագրքերից (2002 թ. դասագրքեր է տրամադրել Ուկրաինայի արտաքին գործերի նախարարությունը): Կիրառվում է ուսուցման ուկրաինական մեթոդիկան: Ուկրաիներենը ուսուցանվում է Երևանի պետական լեզվաբանական համալսարանում:

33. Բելոռուսերեն – կազմակերպվել է կիրակնօրյա դպրոց մեծահասակների և երեխաների համար (շաբաթական 2 ժամ 1 ժամ լեզու, 1 ժամ մշակույթ): Մշակութային միջոցառումները աջակցություն են ստանում Բելոռուսական դեսպանության կողմից, և վերջինս օգնում է համայնքին դասագրքերով: Բացի այդ, Բելոռուսիայի կրթության նախարարությունը օժանդակում է գրականության ձեռքբերմանը (նրանց գրադարանն ունի 800 գիրք): Խոսողների ներկայացուցիչները տեղեկացրել են պատվիրակությանը իրենց ցանկության մասին, որ իրենց լեզուն ուսուցանվեր դպրոցի առանձին դասարաններում կամ որպես կամընտրական առարկա համալսարանում:

34. Լեհերեն – Երևանի N° 24 դպրոցում ուսուցանվում է լեհերեն: Երրորդ դասարանի մակարդակով այն ուսուցանվում է մեկ դասարանում, և հայ երեխաները նույնպես կարող են լեհերեն սովորել: «Պոլոնիա» ոչ կառավարական կազմակերպությունը լեհերենի դասընթացներ է կազմակերպել շաբաթական երկու անգամ Լեհաստանից հրավիրված երկու ուսուցիչներով. վեց

խումբ կա մեծահասակների և երեք խումբ երեխաների համար: Նույն կազմակերպությունը հիմնել է և «Լեհական մշակույթի համալսարանը»: Երևանի պետական լեզվաբանական համալսարանում կա լեհերենի բաժանմունք, և ուսանողներ են գործուղվում Լեհաստան սովորելու: Նոր դասագրքերը՝ հիմնական և բարձրագույն կրթության համար, ուղարկվում են Լեհաստանից:

«է. պայմանների ապահովում, որոնք հնարավորություն կտան տվյալ տարածքում ապրող՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով չխոսողներին (որտեղ այդ լեզուն գործածվում է) ցանկության դեպքում սովորել այն»

35. Ներկայացված տեղեկատվության համաձայն լեզուն չտիրապետողների համար կան Երրորդ մասով ընդգրկված բոլոր լեզուները սովորելու հնարավորություններ: Մյուս լեզուների վերաբերյալ տեղեկություններ չեն եղել, և Փորձագետների կոմիտեն խրախուսում է իշխանություններին ավելի շատ տեղեկատվություն տրամադրել իրենց հաջորդ պարբերական զեկույցում:

«ը. տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ուսումնասիրման և հետազոտման խթանում համալսարաններում կամ համարժեք ուսումնական հաստատություններում»

36. Փորձագետների կոմիտեն «ի տեղվույն» այցելության ժամանակ տեղեկացվել է, որ տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուները ուսուցանվում են համալսարանում և համարժեք հաստատություններում, սակայն այդ լեզուները սովորելու հնարավորությունները մեծապես կախված են նրանց ազգակից երկրների աջակցությունից: Երրորդ մասին վերաբերող լեզուներին կանդիդատանք սույն զեկույցի Գլուխ 2.2.-ում: **Մյուս լեզուների վերաբերյալ Փորձագետների կոմիտեն խրախուսում է իշխանություններին ավելի շատ տեղեկություններ տրամադրել իրենց հաջորդ պարբերական զեկույցում /օրինակ՝ հին ասորերենի ձեռնարկը /:**

«թ. սույն խարտիայում ընդգրկված բնագավառներում ազգամիջյան փոխանակման համապատասխան ձևերի խթանում՝ երկու կամ ավելի պետություններում միանման կամ նույնանման ձևով գործածվող տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների համար»

37. Փորձագետների կոմիտեն «ի տեղվույն» այցելության ժամանակ տեղեկացվել է, որ ազգամիջյան փոխառնչություններ ունեն շատ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ, և խրախուսում է իշխանություններին մանրամասն մշակել այս հարցը հաջորդ պարբերական զեկույցում:

«Կետ 2.

Կողմերը պարտավորվում են վերացնել (եթե դեռ չի արվել) ցանկացած չարդարացված տարբերություն, բացառում, սահմանափակում կամ նախապատվություն, որոնք վերաբերում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվի գործածմանը և ուղղված են տվյալ լեզվի պահպանումն ու զարգացումը վնասելուն կամ վտանգելուն: Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների առնչությամբ հատուկ միջոցառումների ընդունումը, որը նպատակաուղղված է աջակցելու իրավահավասարությանը այս լեզուները գործածողների և մնացած բնակչության միջև, կամ որը պատշաճորեն հաշվի է առնում նրանց հատուկ պայմանները, չի համարվի խտրականության ակտ ավելի լայնորեն գործածվող լեզուներ գործածողների նկատմամբ»:

38. Սահմանադրության 15-րդ հոդվածը ընդհանուր կետ է պարունակում անխտրականության մասին, որը համաձայնում է վերոնշյալ կետում ներկայացված պարտավորությանը: Բացի այդ, Սահմանադրության 37-րդ կետի համաձայն «Ազգային փոքրամասնություններին պատկանող քաղաքացիները ունեն իրենց ավանդույթների պահպանման, լեզվի և մշակույթի զարգացման իրավունք»:

39. «Ի տեղվույն» այցելության ժամանակ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողների ներկայացուցիչները տեղեկացրել են Փորձագետների կոմիտեին, որ նրանց հայտնի չէ իրենց լեզվի նկատմամբ կիրառված խտրականության որևէ փաստ:

« Կետ 3

Կողմերը պարտավորվում են համապատասխան միջոցներով աջակցել փոխադարձ ըմբռնմանը երկրի բոլոր լեզվական խմբերի միջև և, մասնավորապես, իրենց երկրներում կրթության և ուսուցման նպատակների մեջ ներառել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների նկատմամբ հարգանքը, փոխըմբռնումը և հանդուրժողականությունը, ինչպես նաև խրախուսել զանգվածային լրատվամիջոցներին՝ հետապնդելու միևնույն նպատակները»:

40. Փորձագետների կոմիտեն տեղյակ է «Լեզվաքաղաքականության պետական ծրագրին», որը կարող է հեշտացնել այս սկզբունքների հետ կապված աշխատանքը: **Սակայն Փորձագետների կոմիտեն կուզենար հաջորդ պարբերական զեկույցում ավելի շատ տեղեկատվություն ունենալ այս խնդրի վերաբերյալ, հատկապես՝ այս սկզբունքի իրագործման կոնկրետ օրինակներ:**

« Կետ 4

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների նկատմամբ իրենց քաղաքականությունը որոշելիս Կողմերը պետք է հաշվի առնեն այդ լեզուները գործածող խմբերի կարիքներն ու ցանկությունները: Անհրաժեշտության դեպքում նրանք խրախուսվում են՝ ստեղծելու մարմիններ՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին առնչվող բոլոր խնդիրների մասին իշխանություններին խորհուրդ տալու նպատակով»:

41. Ազգային փոքրամասնությունների կորդինացիոն խորհուրդը իշխանությունների համար խորհրդակցական մարմին է ազգային փոքրամասնությունների պաշտպանությանը վերաբերող քաղաքականության հարցերով: Ստացված տեղեկատվության համաձայն խորհուրդը զբաղվում է նաև լեզվական կրթության հարցերով: Սակայն խորհրդի իրավասությունները (մանդատը) և նրա որոշումների իրավական կարգավիճակը չեն պարզվել Փորձագետների կոմիտեի համար: Ուստի Փորձագետների կոմիտեն խրախուսում է իշխանություններին պարզաբանել այս հարցերը հաջորդ պարբերական զեկույցում

« Կետ 5

Կողմերը պարտավորվում են, mutatis mutandis, կիրառել վերոհիշյալ 1-4-րդ կետերում թվարկված սկզբունքները ոչ տարածքային լեզուների նկատմամբ: Սակայն, քանի որ խոսքը այս լեզուների մասին է, սույն հարտիան ուժի մեջ մտցնելու համար ձեռնարկվող միջոցառումների բնույթն ու գործունեության շրջանակը պետք է որոշվի ճկուն ձևով՝ հաշվի առնելով նաև տվյալ լեզուները գործածող խմբերի կարիքներն ու ցանկությունները և հարգելով նրանց սովորություններն ու առանձնահատկությունները»:

42. Իշխանությունները տեղեկացրել են Փորձագետների կոմիտեին, որ Հայաստանի Հանրապետությունում չեն խոսում ոչ-տարածքային լեզուներով: **Վերը նշված 11-րդ կետի համաձայն Փորձագետների կոմիտեն խրախուսում է իշխանություններին այս առումով ավելի շատ տեղեկատվություն տրամադրել իրենց հաջորդ պարբերական զեկույցում:**

2. 2. Գնահատում Խարտիայի Երրորդ մասի վերաբերյալ

43. Փորձագետների կոմիտեն ավելի մանրամասն ուսումնասիրել է Խարտիայի Երրորդ մասի պաշտպանական մեխանիզմների տակ սահմանվող լեզուների համար առկա պաշտպանությունը: Խնդրո առարկա լեզուներն են ասորերենը, եզդիերենը, հունարենը, ռուսերենը և քրդերենը:

44. Թավ տառատեսակով մեջբերված կետերն ու ենթակետերը Հայաստանի Հանրապետության համար ընտրված կոնկրետ պարտավորություններն են:

Հոդված 8 – Կրթություն

45. Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է «օպտիմալացման ծրագիր» կոչվող կրթական բարեփոխումների ծրագրի մասին, որը սկսվել է իր առաջին զեկույցը Հայաստանի Հանրապետության կողմից ներկայացնելուց հետո: «Օպտիմալացման» ծրագիրը կարող է բացասական ազդեցություն ունենալ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների պաշտպանության վրա, հատկապես փոքր գյուղերի դպրոցների և դասարանների փակման առումով: Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ կա տասնվեց «պաշտպանված» դպրոցների մի ցուցակ, որը չի ներառվել այս ծրագրում, այդ թվում դպրոցներ, որտեղ ուսուցանվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ: «Ի տեղվում» այցելության ժամանակ որոշ փոքրամասնությունների ներկայացուցիչներ տեղեկացրին Փորձագետների կոմիտեին, որ ցուցակը չի ընդգրկում բոլոր դպրոցները, որտեղ ուսուցանվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները, և որ ասորերենով կրթությունը հատկապես դժվար կլինի, եթե օպտիմալացման ծրագիրը իրագործվի ինչպես նախատեսվում է:

Փորձագետների կոմիտեն պնդում է, որ իշխանությունները պետք է երաշխավորեն, որ «օպտիմալացման» ծրագիրը վտանգի չի ենթարկում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կրթությունը:

«Կետ 1

Կրթության կապակցությամբ այն տարածքներում, որտեղ այսպիսի լեզուները գործածվում են՝ համաձայն յուրաքանչյուր լեզվի կարգավիճակին և առանց վնասելու պետության պաշտոնական լեզվի կամ լեզուների ուսուցմանը, Կողմերը պարտավորվում են.

Նախադպրոցական կրթություն

ա. i. մատչելի դարձնել նախադպրոցական կրթությունը՝ համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. մատչելի դարձնել նախադպրոցական կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուներով,

iii. կիրառել վերոհիշյալ i և ii կետերում նշված նախաձեռնված միջոցառումներից որևէ մեկը առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնց ընտանիքները այդպիսի խնդրանք են ներկայացրել, և որոնց քանակը համարվում է բավարար, կամ

iv. եթե պետական մարմինները նախադպրոցական կրթության բնագավառում չունեն անմիջական իրավասություն՝ աջակցելու վերոհիշյալ i-iii կետերում նշված միջոցառումների կիրառմանը և/կամ խրախուսելու այն»:

46. Հայաստանի իշխանությունները տեղեկացրել են Փորձագետների կոմիտեին, որ կառավարությունը «աջակցում է ազգային փոքրամասնությունների համայնքներին՝ կազմակերպելու նախադպրոցական կրթություն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով այն երեխաների համար, որոնց ընտանիքները դա պահանջում են, և այն դեպքում, երբ աշակերտների թիվը համարվում է բավարար»: Համաձայն իշխանությունների, ծնողների կողմից պահանջ չի եղել նախադպրոցական կրթություն կազմակերպել եզդիերեն կամ քրդերեն: Սակայն եղած տեղեկություններից պարզ չէ, թե ինչպես են իշխանությունները նպաստում և/կամ խրախուսում նախադպրոցական կրթության հիմնադրումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով:

47. Թեև Վերին Դվիումը կա նախադպրոցական դասարան, որտեղ սովորեցնում են ասորերեն, Փորձագետների կոմիտեն տեղեկություններ չունի, թե ինչպես է հովանավորվում և/կամ խրախուսվում ասորերեն նախադպրոցական կրթությունը:

48. Թեև Փորձագետների կոմիտեն տեղյակ է, որ Երևանում կա մանկապարտեզ, որտեղ սովորեցնում են **հունարեն**, Փորձագետների կոմիտեն տեղեկություններ չունի, թե ինչպես է հովանավորվում և/կամ խրախուսվում հունարեն նախադպրոցական կրթությունը:

49. Իշխանությունները տեղեկացրել են Փորձագետների կոմիտեին, որ **ռուսերեն** նախադպրոցական կրթությունը մատչելի է բոլոր այն երեխաների համար, որոնց ծնողները հայտնել են այդ ցանկությունը: Ռուսերենը ուսուցանվում է մի քանի նախադպրոցական կենտրոններում Երևանում և Գյումրիում:

50. Փորձագետների կոմիտեն տեղեկացված չի եղել **քրդերեն** կամ **եզդիերեն** նախադպրոցական կրթությանը աջակցելու և/կամ խրախուսելու միջոցառումների մասին և տեղեկացված չի եղել որևէ գոյություն ունեցող նախադպրոցական կրթության մասին:

51. Փորձագետների կոմիտեն գտնում է, որ պարտավորությունը կատարված է ռուսերենի վերաբերմամբ: Մյուս լեզուների վերաբերյալ Փորձագետների կոմիտեն եզրակացություն անել չի կարող: Նա խնդրում է ավելի շատ տեղեկատվություն այս լեզուների և նրանցով նախադպրոցական կրթությանը աջակցելու և/կամ խրախուսելու համար ձեռնարկված միջոցառումների վերաբերյալ:

Տարրական կրթություն

«բ. i. մատչելի դարձնել տարրական կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

ii. մատչելի դարձնել տարրական կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով,

iii. տարրական կրթության շրջանակներում ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ուսուցանումը որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ

iv. կիրառել վերոնշյալ i-ից մինչև iii միջոցներից մեկը առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնց ընտանիքները այդպիսի խնդրանք են ներկայացրել, և որոնց քանակը համարվում է բավարար»:

52. Փորձագետների կոմիտեին ներկայացված փաստերի համաձայն Հայաստանի Հանրապետությունում բոլոր տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները ուսուցանվում են տարրական դպրոցում: Սակայն իրադրությունը լեզվից լեզու տարբերվում է: Տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով տարրական կրթություն հիմնելու համար բավարար քանակություն է ընդունված յոթը: Տնօրենները հնարավորություն ունեն մաս կոնկրետ դեպքերում ընդունել ավելի փոքր քանակություն: Փորձագետների կոմիտեն գովում է այս պրակտիկան:

53. **Ասորերեն** տարրական կրթությունը մատչելի է այն երեխաների համար, որոնց ծնողները այդ պահանջում են: Ստացված տեղեկատվության համաձայն բավարար է համարված 5 երեխան (այլ լեզուների 7-ի հետ համեմատած): Ասորերենը որպես հատուկ դասընթաց ուսուցանվում է Վերին Դվինում, Դիմիտրովում, Արզնիում, Նոր Արտագետում և Երևանի Պուշկինի անվան N°8 դպրոցում: Դասերին հաճախում են մոտավորապես 800 աշակերտ: Արզնի գյուղում ուսուցիչը լրացուցիչ դրամ է ստանում տեղական բյուջեից որպես խրախուսում՝ շարունակելու ասորերենի ուսուցումը: Այս դպրոցում դասավանդվում է ասորիների պատմություն 4 - 8-րդ դասարաններում: Երևանում ասորերենը ուսուցանվում է տարրական մակարդակով մեկ դպրոցում, և երեխաները քննություն են հանձնում ասորերենից: Այդ դպրոցում դասավանդվում է նաև ասորիների պատմություն և մշակույթ: Ոչ-ասորի երեխաները նույնպես կարող են հաճախել դասերին:

54. Դասագրքերի պակասը ասորախոսների հիմնական խնդիրն է: Գրքերը կամ ներմուծվում են Իրանից կամ Շվեդիայից անբավարար քանակությամբ, կամ երկար ժամանակ չեն արդիականացվել: Փորձագետների կոմիտեն դասագրքերի ֆինանսավորումը համարում է

անբավարար և խրախուսում է իշխանություններին մշտական և ավելի գործուն մոտեցում ցուցաբերել ասորերեն դասագրքերի և ուսումնական նյութերի արտադրությանը:

55. **Եզդիերեն** տարրական կրթությունը մատչելի է այն երեխաների համար, որոնց ծնողները այդ պահանջում են: Ստացված տեղեկատվության համաձայն բավարար է համարված պահանջը 7 երեխայի համար: Եզդիական 14 գյուղերի մեծ մասում երեխաներին սովորեցնում են եզդիերեն: Մոտ 10 գյուղերում կան ուսուցիչներ, որոնք իրենք եզդի են և լեզու են դասավանդում: Սակայն ուսուցիչների պակաս կա: Եզդիական գյուղերը ցրված են, և բավարար թվով ուսուցիչներ չկան, ովքեր կցանկանային մի գյուղից մյուսը ճանապարհորդել լեզուն սովորեցնելու համար: Դպրոցների դասագրքերը հին են և արդիականացման կարիք ունեն:

56. **Հունարեն** տարրական կրթությունը մատչելի է այն երեխաների համար, որոնց ծնողները այդ պահանջում են: Ստացված տեղեկատվության համաձայն բավարար է համարված պահանջը 7 երեխայի համար: Հունարենի ուսուցումը կատարվում է Երևանի No12 և No 74 դպրոցներում (մեկում որպես կամընտրական առարկա, մյուսում՝ առաջին դասարանի), ինչպես նաև Վանաձորի մեկ դպրոցում: Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ ուսուցիչներին վճարում է Հունաստանի կառավարությունը իրենց դեսպանատան միջոցով, և ուսումնական նյութերը ուղարկվում են Հունաստանից:

57. Իշխանություններից ստացված տեղեկատվության համաձայն **ռուսերեն** տարրական կրթությունը մատչելի է բոլոր ռուս երեխաների համար, որոնց ծնողները ցանկություն են հայտնել այն տալու իրենց երեխաներին: Այն բոլոր բնակավայրերում, որտեղ երեխաների թիվը մեկ դասարանի համար բավարար է (ըստ Կրթության նախարարության 5-7 աշակերտ), տարրական կրթությունը տրվում է ռուսերեն: Ռուսերենը որպես դասավանդման լեզու ունեցող դպրոցները գործում են Ֆիզլետովո և Լերմոնտովո գյուղերում: 47 դպրոցներում կան դասարաններ, որտեղ ռուսերենը դասավանդման լեզու է (դրանցից 15-ը Երևանում): Նշվում է, որ 10000-ից ավելի երեխաներ սովորում են այդ դպրոցներում: Հայաստանի Հանրապետությունում կա նաև 3 դպրոց Ռուսաստանի Դաշնության բանակի կայազորում (Երևանում, Գյումրիում և Արմավիրում), ինչպես նաև Ռուսաստանի դեսպանատան դպրոցը, որտեղ հայ երեխաները սովորում են ազգությամբ ռուս երեխաների հետ (այս դպրոցներում հայերենը չի ուսուցանվում):

58. Իշխանություններից ստացված տեղեկատվության համաձայն **քրդերեն** տարրական կրթությունը մատչելի է բոլոր քուրդ երեխաների համար, որոնց ծնողները ցանկություն են հայտնել այն տալու իրենց երեխաներին: Այն բոլոր բնակավայրերում, որտեղ երեխաների թիվը մեկ դասարանի համար բավարար է (ըստ Կրթության նախարարության 5-7 աշակերտ) տարրական կրթությունը տրվում է քրդերեն: **Շաբաթական 2 ժամով քրդերենը ուսուցանվում է Ջովունի գյուղի դպրոցում: Խոսողների ներկայացուցիչների համաձայն մի շարք այլ գյուղերում քրդերենն այլևս չի ուսուցանվում ուսուցիչներ չլինելու պատճառով: «Ի տեղվույն» այցելության ժամանակ ստացված տեղեկատվությունից Փորձագետների կոմիտեի համար չպարզվեց՝ այդ գյուղերում խոսում են եզդիերեն, թե՞ քրդերեն: Փորձագետների կոմիտեն նշում է, որ ուսուցիչների պակասը կարող է դժվարություններ ստեղծել քրդերենի ուսուցման կամ քրդերենով կրթություն ստանալու համար:**

59. Փորձագետների կոմիտեն համարում է, որ պարտավորությունները կատարված են ռուսերենի և հունարենի վերաբերմամբ և մասամբ կատարված են ասորերենի, եզդիերենի և քրդերենի վերաբերմամբ:

Փորձագետների կոմիտեն խրախուսում է իշխանություններին ավելացնել իրենց ջանքերը ասորերեն, եզդիերեն և քրդերեն տարրական կրթության համար ուսուցիչների բավարար քանակ ունենալու և ուսումնական նյութերը արդիականացնելու ուղղությամբ:

Միջնակարգ կրթություն

«գ. i. մատչելի դարձնել միջնակարգ կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. մատչելի դարձնել միջնակարգ կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

iii. միջնակարգ կրթության շրջանակներում ապահովել համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ուսուցանումը որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ

iv. կիրառել վերոնշյալ i-ից մինչև iii միջոցներից մեկը առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնք (կամ, հնարավորության դեպքում, որոնց ընտանիքները) այդպես են ցանկանում, և որոնց թիվը համարվում է բավարար:

60. Հայաստանի Հանրապետությունում միջնակարգ կրթությունը բաղկացած է երկու մակարդակից՝ միջին և ավագ միջնակարգ կրթություն: Միջին միջնակարգ կրթությունը հիմնական կրթական համակարգի մասն է և պարտադիր է: Ավագ միջնակարգ կրթությունը պարտադիր չէ: Երբեմն պարզ չէ, միջնակարգ կրթության որ մակարդակին է վերաբերում ներկայացված տեղեկատվությունը: Փորձագետների կոմիտեն խրախուսում է իշխանություններին հաջորդ պարբերական զեկույցում հստակեցնել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների իրավիճակը ըստ միջնակարգ կրթության երկու տարբեր տիպերի, հատկապես տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուն կիրառող աշակերտների համար միջինից ավագ միջնակարգ կրթության անցնելիս դա շարունակելու հնարավորության տեսակետից: Տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով միջնակարգ կրթություն հիմնելու համար բավարար համարված քանակը 7-ն է: Տնօրենները հնարավորություն ունեն նաև կոմկրետ դեպքերում ընդունելու աշակերտների ավելի փոքր քանակ: Փորձագետների կոմիտեն գովում է այս պրակտիկան:

61. **Ասորերեն** միջնակարգ կրթությունը մատչելի է այն երեխաների համար, որոնց ծնողները այդ պահանջում են: Ստացված տեղեկատվության համաձայն բավարար է համարված 5 երեխան (այլ լեզուների 7-ի հետ համեմատած): Ասորերենը ուսուցանվում է որպես հատուկ դասընթաց Վերին Դվինում, Դիմիտրովում, Արզնիում, Նոր Արտագետում և Երևանի Պուլչկինի անվան No 8 դպրոցում: Արզնի գյուղում ուսուցիչը լրացուցիչ դրամ է ստանում տեղական բյուջեից որպես խրախուսում շարունակելու ասորերենի ուսուցումը: Այս դպրոցում դասավանդվում է ասորիների պատմություն 4 - 8-րդ դասարաններում: Դասագրքերի պակասը ասորախոսների հիմնական խնդիրն է: Գրքերը կամ ներմուծվում են Իրանից կամ Շվեդիայից անբավարար քանակությամբ, կամ երկար ժամանակ չեն արդիականացվել: **Փորձագետների կոմիտեն դասագրքերի ֆինանսավորումը համարում է անբավարար և խրախուսում է իշխանություններին մշտական և ավելի գործուն մոտեցում ցուցաբերել ասորերեն դասագրքերի և ուսումնական նյութերի արտադրությանը:**

62. **Եզդիերեն** միջնակարգ կրթությունը մատչելի է այն երեխաների համար, որոնց ծնողները այդ պահանջում են: Ստացված տեղեկատվության համաձայն բավարար է համարված պահանջը 7 երեխայի համար: Եզդիական 14 գյուղերի մեծ մասում երեխաներին սովորեցնում են եզդիերեն: Մոտ 10 գյուղերում կան ուսուցիչներ, որոնք իրենք եզդի են և լեզու են դասավանդում: Սակայն ուսուցիչների պակաս կա: Եզդիական գյուղերը ցրված են, և բավարար թվով ուսուցիչներ չկան, ովքեր կցանկանային մի գյուղից մյուսը ճանապարհորդել լեզուն սովորեցնելու համար: Դպրոցների դասագրքերը հին են և արդիականացման կարիք ունեն: Թվում է, որ երեխաների մի մեծ տոկոս դպրոց չի հաճախում: Փորձագետների կոմիտեն մտահոգված է ուսուցիչների պակասով և դպրոցի անկանոն հաճախումներով:

63. **Հունարեն** միջնակարգ կրթությունը մատչելի է այն երեխաների համար, որոնց ծնողները այդ պահանջում են: Ստացված տեղեկատվության համաձայն բավարար է համարված պահանջը 7 երեխայի համար: Հունարենը ուսուցանվում է Երևանի No 12 և No 74 դպրոցներում: Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ ուսուցիչներին վճարում է Հունաստանի կառավարությունը իրենց դեսպանատան միջոցով, և ուսումնական նյութերը ուղարկվում են Հունաստանից:

64. Իշխանություններից ստացված տեղեկատվության համաձայն **ռուսերեն** միջնակարգ կրթությունը մատչելի է բոլոր ռուս երեխաների համար, որոնց ծնողները ցանկություն են հայտնել այն տալու իրենց երեխաներին: Այն բոլոր բնակավայրերում, որտեղ երեխաների թիվը մեկ

դասարանի համար բավարար է (ըստ Կրթության նախարարության 5-7 աշակերտ), միջնակարգ կրթությունը տրվում է ռուսերեն: Ռուսերենը որպես դասավանդման լեզու ունեցող դպրոցները գործում են Ֆիզիկոստիկ և Լեռնոնտոստիկ գյուղերում: 47 դպրոցներում կան դասարաններ, որտեղ ռուսերենը դասավանդման լեզու է (դրանցից 15-ը Երևանում): Նշվում է, որ 10000-ից ավելի երեխաներ սովորում են այդ դպրոցներում: Հայաստանի Հանրապետությունում կան նաև Ռուսաստանի Դաշնության բանակի կայազորի 3 դպրոցներ (Երևանում, Գյումրիում և Արմավիրում), ինչպես նաև Ռուսաստանի դեսպանատան դպրոցը, որտեղ հայ երեխաները սովորում են ազգությամբ ռուս երեխաների հետ (այս դպրոցներում հայերենը չի ուսուցանվում): Փորձագետների կոմիտեն այն տպավորությունն ունի, թե թվերը վերաբերում են միայն միջին միջնակարգ կրթությանը:

65. Իշխանություններից ստացված տեղեկատվության համաձայն **քրդերեն** միջնակարգ կրթությունը մատչելի է բոլոր քուրդ երեխաների համար, որոնց ծնողները ցանկություն են հայտնել այն տալու իրենց երեխաներին: Այն բոլոր բնակավայրերում, որտեղ երեխաների թիվը մեկ դասարանի համար բավարար է (ըստ Կրթության նախարարության 5-7 աշակերտ) միջնակարգ կրթությունը տրվում է քրդերեն: Առաջին զեկույցի համաձայն շաբաթական 2 ժամով քրդերենը ուսուցանվում է Չոփունի գյուղի դպրոցում: 20 այլ գյուղերում քրդերենն այլևս չի ուսուցանվում ուսուցիչներ չլինելու պատճառով: «Ի տեղվում» այցելության ժամանակ ստացված տեղեկատվությունից Փորձագետների կոմիտեի համար չպարզվեց՝ այդ գյուղերում խոսում են եզդիերեն՞, թե՞ քրդերեն: Փորձագետների կոմիտեն նշում է, որ ուսուցիչների պակասը կարող է գործնականում դժվարացնել քրդերեն կրթության ապահովումը:

66. Փորձագետների կոմիտեն համարում է, որ պարտավորությունները կատարված են հունարենի և ռուսերենի վերաբերմամբ և մասամբ կատարված են ասորերենի, եզդիերենի և քրդերենի վերաբերմամբ: Փորձագետների կոմիտեն նաև խրախուսում է իշխանություններին պարզաբանել ավագ միջնակարգ կրթության վիճակը բոլոր լեզուների վերաբերյալ:

Փորձագետների կոմիտեն խրախուսում է իշխանություններին ավելացնել իրենց ջանքերը ասորերեն, եզդիերեն և քրդերեն միջնակարգ կրթության համար ուսուցիչների բավարար քանակ ունենալու և ուսումնական նյութերը նորացնելու ուղղությամբ:

Տեխնիկական և մասնագիտական կրթություն

«դ. i. մատչելի դարձնել տեխնիկական և մասնագիտական կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. մատչելի դարձնել տեխնիկական և մասնագիտական կրթության հիմնական մասը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

iii. տեխնիկական և մասնագիտական կրթության շրջանակներում ապահովել համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների ուսուցումը որպես ուսումնական պլանի անբաժանելի մաս, կամ

iv. կիրառել վերոնշյալ i-ից մինչև iii միջոցներից մեկը առնվազն այն աշակերտների նկատմամբ, որոնք (կամ, հնարավորության դեպքում, որոնց ընտանիքները) այդպես են ցանկանում, և որոնց թիվը համարվում է բավարար,

67. Իշխանություններից ստացված տեղեկատվության համաձայն տեխնիկական և մասնագիտական կրթությունը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով մատչելի է Հայաստանի Հանրապետությունում այնտեղ, ուր դրա պահանջը կա: Բացի այդ, արձանագրվել է, որ ասորերենով և հունարենով ուսուցում չկա, քանի որ պահանջ չի եղել. մի քանի տարի առաջ Երևանի մանկավարժական ուսումնարանում եղել են քրդերենի և եզդիերենի բաժանմունքներ, որոնք սակայն փակվել են դիմորդներ չլինելու պատճառով: Սակայն, Փորձագետների կոմիտեի ըմբռնմամբ այս պարտավորությունը իշխանություններին պարտավորեցնում է «մատչելի դարձնել» կամ «ապահովել» այդ լեզուների ուսուցումը կամ դրանցով կրթությունը առնվազն այն աշակերտների համար, ովքեր ուզում են այդ իրականացնելու համար

բավարար համարված քանակի դեպքում: Փորձագետների կոմիտեն տեղեկացված չի եղել այդ ուղղությամբ իշխանությունների ձեռնարկած որևէ միջոցի մասին:

68. Ինչ վերաբերում է ռուսերենին, Երևանի պետական հունանիտար քոլեջում կա ռուսաց լեզվի բաժանմունք: Մնացած բոլոր տեխնիկական և մասնագիտական կրթական հաստատություններում ռուսաց լեզուն ուսուցանվում է իբրև օտար լեզու որպես դասընթացի մաս:

69. Փորձագետների կոմիտեն համարում է, որ այս պարտավորությունը կատարված է ռուսերենի վերաբերյալ և չի իրականացվել ասորերենի և հունարենի վերաբերյալ: Փորձագետների կոմիտեն չի կարող եզրակացություն անել քղդերենի և եզդիերենի վերաբերյալ և խրախուսում է իշխանություններին իրենց հաջորդ պարբերական զեկույցում ավելի շատ տեղեկատվություն տրամադրել այդ լեզուների մասին:

Փորձագետների կոմիտեն խրախուսում է իշխանություններին միջոցներ ձեռնարկել երաշխավորելու, որ փոքրամասնությունների լեզուների կամ դրանցով ուսուցման առաջարկ մտցվի տեխնիկական և մասնագիտական կրթության մեջ:

Համալսարանական և բարձրագույն կրթություն

«ե. i. մատչելի դարձնել համալսարանական կամ այլ բարձրագույն կրթությունը համապատասխան տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ

ii. ստեղծել հնարավորություններ՝ ուսուցանելու այդ լեզուները որպես համալսարանական և այլ բարձրագույն կրթական հաստատությունների ուսուցանվող առարկաներ, կամ

iii. բարձրագույն կրթական հաստատությունների կապակցությամբ, եթե պետության ստանձնած դերի պատճառով i և ii ենթակետերը չեն կարող կիրառվել, ապա աջակցել և/կամ թույլ տալ համալսարանի կամ բարձրագույն կրթական այլ ձևերի տրամադրումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ հնարավորությունների տրամադրումը այս լեզուների ուսուցման համար՝ որպես համալսարանական կամ բարձրագույն կրթական հաստատությունների առարկաներ»:

70. Փորձագետների կոմիտեն տեղեկատվություն է ստացել, որ տրածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները ուսուցանվում են համալսարաններում և բարձրագույն կրթության հաստատություններում:

71. Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ հնարավորություն կա ուսումնասիրելու հին **ասորերենը**, բայց ներկայումս ժամանակակից ասորերենը ուսումնասիրելու հնարավորություն չկա: Առաջին պարբերական զեկույցի համաձայն մի շարք համալսարաններ պահանջի դեպքում կարող են կազմակերպել ժամանակակից ասորերենի դասընթացներ: **Սակայն Փորձագետների կոմիտեն չի տեղեկացվել իշխանությունների կողմից այդ դասընթացները կամ ժամանակակից ասորերենի ուսումնասիրությունը խրախուսելու համար ձեռնարկված որևէ միջոցի մասին: Փորձագետների կոմիտեն կողջունի այդ միջոցառումների մասին տեղեկատվությունը հաջորդ պարբերական զեկույցում:**

72. Առաջին զեկույցի համաձայն մի շարք համալսարաններ կարող են ըստ պահանջի առաջարկել եզդիերենի հատուկ դասընթացներ, և Երևանի կառավարման համալսարանը առաջարկում է եզդիերենով մասնագիտական ուսուցում: Փորձագետների կոմիտեն խրախուսում է իշխանություններին ավելի շատ տեղեկատվություն տրամադրել եզդիերենով մասնագիտական ուսուցման և այլ հաստատություններում եզդիերենի կամ այդ լեզվով համալսարանական կամ բարձրագույն ուսուցումը խրախուսելու միջոցառումների վերաբերյալ:

73. Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ Երևանի պետական համալսարանի արևելագիտական ֆակուլտետը և մի շարք այլ բարձրագույն ուսումնական հաստատություններ առաջարկել են **քրդերենի** ուսուցում:

74. Կա **հունարենի** բաժանմունք Երևանի պետական լեզվաբանական համալսարանում, և Երևանի պետական համալսարանը առաջարկում է հունարենի և հունագիտության ուսուցում: Մի շարք մասնավոր համալսարաններ ևս առաջարկել են հունարենի դասընթացներ:

75. Երևանի Ռուս-հայկական (Սլավոնական) համալսարանը բարձրագույն կրթություն է տրամադրում մի շարք բնագավառներում, և **ռուսերենը** դասավանդման լեզուն է: Պետական համալսարանների մեծ մասում, ինչպես նաև մի շարք մասնավոր համալսարաններում կան ռուսաց լեզվի և գրականության ֆակուլտետներ:

76. Փորձագետների կոմիտեն համարում է, որ այս պարտավորությունը կատարված է **հունարենի, ռուսերենի և քրդերենի վերաբերմամբ: Եզդիերենի և ասորերենի վերաբերյալ Փորձագետների կոմիտեն չի կարող եզրակացություն անել և խրախուսում է իշխանություններին ավելի շատ տեղեկատվություն տրամադրել իրենց հաջորդ պարբերական զեկույցում:**

Չափահասների և շարունակական կրթություն

«գ. iii. եթե պետական մարմինները չունենան անմիջական իրավասություն չափահասների կրթության ոլորտում, ապա աջակցել նշված լեզուների առաջարկմանը կամ խրախուսել դրանց՝ որպես շարունակական կրթության առարկաների»:

77. Իշխանություններից ստացված տեղեկատվության համաձայն բոլոր տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով չափահասների կամ շարունակական կրթության դասընթացներ հաճախելու հնարավորությունները գոյություն ունեն Զայաստանի հանրապետությունում՝ կախված պահանջից: Առաջին զեկույցը նշում է, որ չափահասների համար կա ասորերենի կիրակնօրյա դասընթաց Արզնիում, և հույներով բնակեցված տասը բնակավայրերում կան կիրակնօրյա դասընթացներ, որոնց աջակցում է Զայաստանի Զանրապետությունում Զունաստանի դեսպանատունը: Մյուս լեզուների համար Փորձագետների կոմիտեն տեղեկացված չէ չափահասների կամ շարունակական կրթության որևէ առաջարկի մասին: Բացի այդ, Փորձագետների կոմիտեն տեղեկացված չէ այդ լեզուների՝ որպես չափահասների կամ շարունակական կրթության առարկաների առաջարկը հովանավորելու և/կամ խրախուսելու համար իշխանությունների ձեռնարկած միջոցների մասին: Փորձագետների կոմիտեն համարում է, որ պարտավորությունը կատարված է հունարենի վերաբերյալ: Մյուս լեզուների համար Փորձագետների կոմիտեն չի կարող եզրակացություն անել և խրախուսում է իշխանություններին տեղեկատվություն տալ իրենց հաջորդ պարբերական զեկույցում:

Հոդված 9 – Դատական մարմիններ

«Կետ 1

Այն դատական տարածքների առնչությամբ, որտեղ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող բնակիչների թիվը համապատասխանում է ներքոնշյալ միջոցառումներին՝ համաձայն այս լեզուներից յուրաքանչյուրի դերի, և այն պայմանով, որ սույն կետով տրամադրված հնարավորությունների օգտագործումը դատավորի կողմից չի համարվում պատշաճ արդարադատության իրականացմանը խոչընդոտող, Կողմերը պարտավորվում են՝

ա. ii. երաշխավորել մեղադրյալին, որ նա իրավունք կունենա գործածելու իր տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուն»:

78. Քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածը սահմանում է.
«1. Քրեական դատավարությունը տարվում է հայերեն: Քրեական դատավարության ընթացքում յուրաքանչյուր ոք, բացառությամբ քրեական վարույթն իրականացնող մարմնի, իրավունք ունի հանդես գալ այն լեզվով, որին տիրապետում է:
2. Քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ՝ քրեական դատավարության լեզվին չտիրապետող՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց անհատույց

հնարավորություն է տրվում թարգմանչի օգնությամբ իրականացնել սույն օրենսգրքով սահմանված իրենց բոլոր իրավունքները:

3. Քրեական դատավարության լեզվին չտիրապետող համապատասխան անձանց տրվում են սույն օրենսգրքով նախատեսված՝ հանձնման ենթակա փաստաթղթերի վավերացված պատճեններն այն լեզվով, որին նրանք տիրապետում են:

4. Այլ լեզվով փաստաթղթերը քրեական գործին կցվում են դրանց հայերեն թարգմանությունների հետ»:

79. Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ գրավոր և բանավոր թարգմանությունը տրամադրվում է անվճար:

80. Փորձագետների կոմիտեն ընդգծում է, որ այս պարտավորությունը վերաբերում է ոչ միայն այն իրադրությանը, երբ մեղադրյալ անձը չի հասկանում դատարանի լեզուն: Հոդված 9-ի 1. ա. ii կետը երաշխավորում է մեղադրյալ անձի իրավունքը՝ գործածելու իր տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուն, նույնիսկ երբ անձը կարող է արտահայտվել հայերեն (տես Խորվաթիայի վերաբերյալ Փորձագետների կոմիտեի առաջին գնահատողական զեկույցի 62-րդ կետը (ECRML (2001) 2)):

81. «Ի տեղվույն» այցելության ժամանակ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողները, որոնց հետ հանդիպել է Փորձագետների կոմիտեն, հաստատել են, որ նրանք չեն գործածում իրենց մայրենի լեզուն քրեական դատավարության ընթացքում, քանի որ ազգային փոքրամասնությունների բոլոր ներկայացուցիչները բավարար չափով տիրապետում են հայերենին: Նրանցից մի քանիսի համաձայն՝ թարգմանիչ կտրամադրվեր նրան, ով չի տիրապետում հայերենին:

82. **Ստացված տեղեկությունների հիման վրա Փորձագետների կոմիտեն ի վիճակի չէ եզրակացություն անել այս պարտավորության վերաբերյալ և խրախուսում է իշխանություններին պարզաբանել՝ արդյոք հայերենին տիրապետող մեղադրյալ անձը օրինական իրավունք ունի՞ իր ցանկությանը գործածել իր տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուն: Փորձագետների կոմիտեն նաև խրախուսում է իշխանություններին տեղեկատվություն տրամադրել այս իրավունքի մասին դատարանին և հանրությանը տեղյակ պահելու միջոցառումների և այս պարտավորությունը իրագործելու որևէ այլ միջոցառումների մասին:**

«ա. iii. ապահովել, որ հարցումները և ապացույցները (գրավոր թե բանավոր) չպետք է անընդունելի համարվեն, որովհետև դրանք ձևակերպվել են տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով»:

83. Առաջին պարբերական զեկույցում իշխանությունների տրամադրած տեղեկատվության համաձայն հարցումները և ապացույցները (գրավոր թե բանավոր) չպետք է անընդունելի համարվեն, լոկ այն պատճառով, որ դրանք ձևակերպված են փոքրամասնության լեզվով:

84. Թվում է, որ կան իրավական կանոնակարգումներ, և Փորձագետների կոմիտեն իր «ի տեղվույն» այցելության ընթացքում չի լսել որևէ միջադեպի մասին, երբ նման ապացույցը մերժվել է այն պատճառով, որ ձևակերպված է եղել տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով:

85. Հետևաբար Փորձագետների կոմիտեն պարտավորությունը համարում է կատարված:

«ա. iv. հարցման հիման վրա իրավական գործերի հետ կապված փաստաթղթեր տրամադրել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով»:

86. Առաջին պարբերական զեկույցում իշխանությունները հաստատում են, որ փաստաթղթի պատճենը պահանջող և դատավարության լեզուն չհմացող անձանց տրվում են փաստաթղթերի հաստատված պատճեններ նրանց իմացած լեզվով, որ տրամադրվում են նրանց պահանջով:

87. Փորձագետների կոմիտեն ընդգծում է, որ այս պարտավորությունը կատարած լինելու համար պատճենները պետք է տրամադրվեն նաև այն անձանց, ովքեր գիտեն դատավարության լեզուն, բայց գերադասում են փաստաթղթեր ունենալ իրենց տարածաշրջանային կամ

փոքրամասնության լեզվով: Փորձագետների կոմիտեն տեղեկացված չի եղել այս պարտավորության գործնական կատարումը երաշխավորելու համար իշխանությունների որևէ համակարգված մոտեցման մասին:

88. **Սրա վրա հիմնվելով՝ Փորձագետների կոմիտեն համարում է, որ պարտավորությունը չի կատարված:**

Քաղաքացիական դատավարության մեջ

«բ. ii. թույլատրել, որ դատարանի առաջ կանգնելու դեպքում կողմը խոսի տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով՝ առանց դրա համար լրացուցիչ ծախսեր կրելու»:

89. Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 7-րդ հոդվածի համաձայն քաղաքացիական դատավարության մեջ գտնվող անձը, որը չգիտի դատավարության լեզուն (հայերենը), իրավունք ունի ծանոթանալու գործի հետ կապված նյութերին, մասնակցելու դատական գործընթացին և դատարանում խոսելու այլ լեզվով՝ թարգմանչի օգնությամբ:

90. Փորձագետների կոմիտեն տեղեկացված է, որ գրավոր և բանավոր թարգմանությունը տրամադրվում է անվճար:

91. Փորձագետների կոմիտեն ընդգծում է, որ այս պարտավորությունը վերաբերում է ոչ միայն այն իրադրությանը, երբ կողմերից մեկը չի հասկանում դատարանի լեզուն: 9-րդ հոդվածի 1. ա. ii կետը երաշխավորում է կողմի իրավունքը՝ գործածելու իր տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուն, նույնիսկ երբ անձը կարող է արտահայտվել հայերեն:

92. «Ի տեղվույն» այցելության ընթացքում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողները, որոնց հետ հանդիպել է Փորձագետների կոմիտեն, հաստատել են, որ նրանք չեն գործածում իրենց մայրենի լեզուն դատարանում, քանի որ ազգային փոքրամասնությունների բոլոր ներկայացուցիչները բավարար չափով տիրապետում են հայերենին: Նրանցից մի քանիսի համաձայն՝ թարգմանիչ կտրամադրվեր նրան, ով չի տիրապետում հայերենին:

93. **Փորձագետների կոմիտեն, հենվելով ստացված տեղեկատվության վրա, ի վիճակի չէ եզրակացության հանգելու այս պարտավորության վերաբերյալ և խրախուսում է իշխանություններին պարզաբանելու, արդյոք հայերեն իմացող կողմը օրինական իրավունք ունի՞ իր ցանկությամբ գործածելու իր տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզուն: Փորձագետների կոմիտեն նաև խրախուսում է իշխանություններին տեղեկատվություն տրամադրել այս իրավունքի մասին դատարանին և հանրությանը տեղյակ պահելու միջոցառումների և այս պարտավորությունը իրագործելու որևէ այլ միջոցառումների մասին:**

«գ. դատարաններում վարչական գործերի վերաբերյալ դատական գործերում՝

ii. թույլատրել, որ դատարանի առաջ կանգնելու դեպքում կողմը խոսի տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով՝ առանց դրա համար լրացուցիչ ծախսեր կրելու, և/կամ

iii. թույլատրել, որ փաստաթղթերը և վկայությունները տրամադրվեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվով, անհրաժեշտության դեպքում՝ թարգմանիչների և թարգմանությունների օգնությամբ»:

94. Իշխանությունները տեղեկացրել են Փորձագետների կոմիտեին, որ քանի որ օրենսդրությունը երաշխավորում է թարգմանության և թարգմանչի իրավունքը քրեական և քաղաքացիական գործերում, պետք է եզրակացնել, որ նույն իրավունքը կիրառելի է նաև վարչական գործերի դատավարության ընթացքում:

95. **Փորձագետների կոմիտեն հղում է քրեական և քաղաքացիական դատավարություններին վերաբերող իր մեկնաբանություններին և համարում է, որ դրանք վերաբերում են նաև վարչական**

գործերին վերաբերող դատավարություններին: Փորձագետների կոմիտեն տեղյակ է այն փաստին, որ առաջին պարբերական զեկույցի մեջ հիշատակված՝ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի նախագիծը ընդունված է և այժմ ուժի մեջ է: Քանի որ այս օրենքը ակնհայտ առնչություն ունի այս պարտավորության հետ, Փորձագետների կոմիտեն խրախուսում է իշխանություններին իրենց հաջորդ զեկույցի մեջ տեղեկատվություն տրամադրել դրա իրագործման մասին:

դ. քայլեր ձեռնարկել՝ երաշխավորելու, որ վերոհիշյալ «բ» և «գ» կետերի i և iii ենթակետերի կիրառումը և անհրաժեշտության դեպքում թարգմանությունների ու թարգմանիչների օգնության դիմելը չի ներառի հավելյալ ծախսեր շահագրգիռ անձանց համար:

96. Վկայակոչելով վերոհիշյալ Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքը՝ Փորձագետների կոմիտեն նաև խրախուսում է իշխանություններին տեղեկատվություն տրամադրել այս պարտավորության վրա դրա ազդեցության մասին:

Կետ 3

Կողմերը պարտավորվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով մատչելի դարձնել ազգային օրենքով սահմանված ամենակարևոր տեքստերը. հատկապես այն տեքստերը, որոնք վերաբերում են այս լեզուներով խոսողներին (եթե նրանք այլ կերպ չեն տրամադրվում):

97. Իշխանությունները տեղեկացրել են Փորձագետների կոմիտեին, որ Օրենքները հրատարակված են նաև ռուսերեն և զետեղված Ազգային ժողովի վեբ կայքում: Սակայն «ի տեղվում» այցելության ժամանակ Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է ռուսախոսների կողմից, որ ազգային օրենքով սահմանված ոչ բոլոր կարևոր տեքստերն են մատչելի դարձվում ռուսերենով: Սրա հիման վրա Փորձագետների կոմիտեն եզրակացնում է, որ ազգային օրենքով սահմանված որևէ տեքստ մատչելի չի դարձվել Երրորդ մասով նշված տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով: Փորձագետների կոմիտեն համարում է, որ պարտավորությունը չի կատարված ասորերենի, հունարենի, եզդիերենի և քրդերենի վերաբերմամբ և մասամբ է կատարված ռուսերենի վերաբերմամբ:

Հոդված 10. Վարչական մարմիններ և հասարակական ծառայություններ

Պետական մարմիններ

«Կետ 1.

Պետության վարչական տարածքների ներսում, որտեղ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող բնակչության քանակը արդարացնում է ներքոնշյալ միջոցները, և համաձայն յուրաքանչյուր լեզվի վիճակի, Կողմերը հնարավորության սահմաններում պարտավորվում են.

ա. iv. երաշխավորել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողները կկարողանան գրավոր կամ բանավոր հայտեր ներկայացնել այդ լեզուներով, կամ

v. երաշխավորել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողները իրավասու կլինեն փաստաթղթեր ներկայացնել այդ լեզուներով»:

98. Իշխանությունները առաջին պարբերական զեկույցում հաստատել են, որ օրենսդրությունը չի արգելում տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով (գրավոր կամ բանավոր) իշխանություններին դիմելու հնարավորությունը. պատասխանը տրամադրվում է պաշտոնական լեզվով, նկատի ունենալով, որ հնարավոր է նաև պատասխանել տարածաշրջանային կամ

փոքրամասնության լեզվով, եթե դիմողը այդ պահանջում է: «Ի տեղվույն» այցելության ժամանակ Փորձագետների կոմիտեի ստացած տեղեկատվության համաձայն Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 27-րդ հոդվածը սահմանում է, որ փաստաթղթերը կարող են ներկայացվել փոքրամասնության լեզվով հայերեն թարգմանությամբ՝ վճարվելով վարչական մարմնի կողմից:

99. Իրադրությունը լեզուների միջև տարբերվում է:

100. Ռուսերեն, եզդիերեն և քրդերեն խոսողները ներկայացնում են իրենց համապատասխան տարածքների բնակչության էական մասը: Այս լեզուներով խոսողների ներկայացուցիչները տեղեկացրել են Փորձագետների կոմիտեին, որ նրանք գործածում են թե՛ իրենց լեզուն, թե՛ հայերենը տեղական պետական մարմինների հետ հաղորդակցվելիս:

101. Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ ասորերեն խոսողների մեծ մասը չի տիրապետում գրավոր ասորերենին: Ասորերեն խոսողների ներկայացուցիչները տեղեկացրել են Փորձագետների կոմիտեին, որ նրանք որոշ չափով գործածում են ասորերենը տեղական պետական մարմինների հետ բանավոր հաղորդակցվելիս, բայց գործածվում են նաև ռուսերենն ու հայերենը գրավոր և բանավոր ձևով:

102. Հունարենի վերաբերյալ Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ հունարենի իմացությունը հույն բնակչության մեջ նշանակալիորեն տարբերվում է, և որ նրանց մեծամասնությունը գերադասում է տեղական պետական մարմինների հետ հաղորդակցվելիս գործածել ռուսերենը:

Պետական մարմինների հետ բանավոր կամ գրավոր հաղորդակցվելիս տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը հանրությանը թույլատրելու իրավական հիմքերը առկա են, և ըստ երևույթին լիովին կիրառվում են ռուսերենի, քրդերենի և եզդիերենի վերաբերմամբ: Թվում է, որ դա իրականում գործում է նաև ասորերենով բանավոր հաղորդակցվելիս: Սակայն հունարենի վերաբերմամբ այն ըստ երևույթին իրականում չի գործում:

103. Փորձագետների կոմիտեն պարտավորությունը կատարված է համարում ռուսերենի, քրդերենի և եզդիերենի վերաբերմամբ, մասամբ կատարված ասորերենի վերաբերմամբ և ձևականորեն կատարված հունարենի վերաբերմամբ:

«բ. լայնորեն կիրառվող վարչական տեքստերը և ձևերը մատչելի դարձնել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող բնակչության համար կամ ներկայացնել դրանք երկլեզու տարբերակներով»:

104. Չի երևում, որ լայնորեն կիրառվող վարչական տեքստերը թարգմանված լինեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով: Փորձագետների կոմիտեն համարում է, որ այս պարտավորությունը չի կատարվել:

Փորձագետների կոմիտեն խրախուսում է իշխանություններին երաշխավորել լայնորեն կիրառվող վարչական տեքստերի և ձևերի թարգմանությունը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով

«Կետ 2

Տեղական և մարզային մարմինների առնչությամբ, որոնց տարածքում բնակվող տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող բնակչության քանակը արդարացնում է ներքոնշյալ միջոցները, Կողմերը պարտավորվում են թույլատրել և/կամ խրախուսել.

բ. տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողներին հնարավորություն տալ գրավոր կամ բանավոր կերպով հայտ ներկայացնել այդ լեզուներով»:

105. Իշխանությունները առաջին պարբերական զեկույցում հաստատել են, որ օրենսդրությունը չի արգելում տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով (գրավոր կամ բանավոր) իշխանություններին դիմելու հնարավորությունը. պատասխանը տրամադրվում է պաշտոնական լեզվով, նկատի ունենալով, որ հնարավոր է նաև պատասխանել տարածաշրջանային կամ փոքրամասնության լեզվով, եթե դիմողը այդ պահանջում է: «Ի տեղվույն» այցելության ժամանակ Փորձագետների կոմիտեի ստացած տեղեկատվության համաձայն Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 27-րդ հոդվածը սահմանում է, որ փաստաթղթերը կարող են ներկայացվել փոքրամասնության լեզվով՝ հայերեն թարգմանությամբ՝ վճարվելով վարչական մարմնի կողմից:

Իրադրությունը տարբերվում է լեզուների միջև:

106. Ռուսերեն, եզդիերեն և քրդերեն խոսողները ներկայացնում են իրենց համապատասխան տարածքների բնակչության էական մասը: Այս լեզուներով խոսողների ներկայացուցիչները տեղեկացրել են Փորձագետների կոմիտեին, որ նրանք գործածում են թե՛ իրենց լեզուն, թե՛ հայերենը տեղական պետական մարմինների հետ հաղորդակցվելիս:

107. Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ ասորերեն խոսողների մեծ մասը չի տիրապետում գրավոր ասորերենին: Ասորերեն խոսողների ներկայացուցիչները տեղեկացրել են Փորձագետների կոմիտեին, որ նրանք որոշ չափով գործածում են ասորերենը տեղական պետական մարմինների հետ բանավոր հաղորդակցվելիս, բայց գործածվում են նաև ռուսերենն ու հայերենը գրավոր և բանավոր ձևով:

108. Հունարենի վերաբերյալ Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ հունարենի ինացությունը հույն բնակչության մեջ նշանակալիորեն տարբերվում է, և որ նրանց մեծամասնությունը գերադասում է տեղական պետական մարմինների հետ հաղորդակցվելիս գործածել ռուսերենը:

109. Պետական մարմինների հետ բանավոր կամ գրավոր հաղորդակցվելիս տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը հանրությանը թույլատրելու իրավական հիմքերը առկա են, և ըստ երևույթին լիովին կիրառվում են ռուսերենի, քրդերենի և եզդիերենի վերաբերմամբ: Թվում է, որ դա իրականում գործում է նաև ասորերենով բանավոր հաղորդակցվելիս: Սակայն հունարենի վերաբերմամբ այն ըստ երևույթին իրականում չի գործում:

110. Փորձագետների կոմիտեն պարտավորությունը կատարված է համարում ռուսերենի, քրդերենի և եզդիերենի վերաբերմամբ, մասամբ կատարված ասորերենի վերաբերմամբ և ձևականորեն կատարված հունարենի վերաբերմամբ:

«գ. տեղական իշխանությունների կողմից տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածումը իրենց ժողովներում, սակայն առանց բացառելու պետության պաշտոնական լեզվի (լեզուների) գործածումը»:

111. Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ քրդերենը, ասորերենը, եզդիերենը և ռուսերենը իրենց համապատասխան տարածքներում որոշ չափով գործածվում են ժողովներում քննարկումների ժամանակ: Ինչ վերաբերում է այն տարածքին, որտեղ հունարեն են խոսում, Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ տեղական ժողովներում գործածվում է ռուսերենը կամ հայերենը: Փորձագետների կոմիտեն չի տեղեկացվել տեղական ժողովներում հունարենի գործածությունը խրախուսելու համար իշխանությունների ձեռնարկած միջոցների մասին:

112. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է կատարված քրդերենի, ասորերենի, եզդիերենի և ռուսերենի վերաբերմամբ, բայց չկատարված՝ հունարենի վերաբերմամբ:

«է. անհրաժեշտության դեպքում՝ տեղանունների ճշգրիտ կամ ավանդական ձևերի կիրառումը կամ ընդունումը տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուներով՝ պաշտոնական լեզվով (լեզուներով) ընդունված անունների հետ միասին»:

113. Աշխարհագրական անվանումների մասին օրենքի համաձայն բնակավայրերը անվանելիս պետք է հաշվի առնել բնակիչների (տեղաբնիկների) տեսանկյունը (Հոդված 3), իսկ անվանման

կամ վերանվանման առաջարկները կարող են արվել ինչպես տեղական ինքնակառավարման մարմինների, այնպես էլ իրավաբանական և ֆիզիկական անձանց կողմից (Հոդված 6):

114. Ստացված տեղեկատվության համաձայն մի շարք գյուղեր, հրապարակներ, փողոցներ, աղբյուրներ և տեղանքներ ունեն ասորերեն, եզդիերեն, քրդերեն, ռուսերեն և հունարեն անվանումներ իրենց համապատասխան տարածքներում, թեև հունարեն շատ անվանումներ գրված են լատինատառ:

115. **Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է կատարված:**

«Կետ 3

Վարչական մարմինների կամ նրանց անունից գործող այլ անձանց պետական ծառայությունների առնչությամբ այն տարածքում, որտեղ գործածվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները և համաձայն յուրաքանչյուր լեզվի դիրքի, Կողմերը հնարավորության սահմաններում պարտավորվում են.

գ. թույլատրել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողներին հարցում ներկայացնել այդ լեզուներով»:

116. Իշխանությունների համաձայն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողներին թույլատրվում է այդ լեզուներով հարցումներ ներկայացնել վարչական մարմիններին կամ նրանց անունից գործող անձանց՝ հանրային ծառայություններ մատուցելիս: Այս դրույթը հաստատվել է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսողների կողմից: **Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է կատարված:**

«Կետ 4

Կողմերի կողմից ընդունված 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթներն ուժի մեջ մտցնելու համար նրանք պարտավորվում են ձեռնարկել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը.

գ. տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին տիրապետող պետական ծառայողների կողմից հնարավորության սահմաններում բավարարել հարցումներն այն տարածքում, որտեղ տվյալ լեզուն գործածվում է »:

117. **Փորձագետների կոմիտեն բավարար տեղեկատվություն չի ստացել այս պարտավորության իրագործման վերաբերյալ: Հետևաբար Փորձագետների կոմիտեն ի վիճակի չէ եզրակացություն անել այս պարտավորության վերաբերյալ և խրախուսում է իշխանություններին ավելի շատ տեղեկատվություն տրամադրել իրենց հաջորդ պարբերական զեկույցում:**

«Կետ 5

Համապատասխան դիմում ստանալու դեպքում Կողմերը պարտավորվում են թույլ տալ ազգանունների ընդունումը կամ օգտագործումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով»:

118. Իշխանությունների տրամադրած տեղեկատվության համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 22-րդ հոդվածում նշվում է, որ «քաղաքացին իրավունքներ ու պարտականություններ է ձեռք բերում ու իրականացնում իր անվամբ, որը ներառում է նրա անունը և ազգանունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը: Քաղաքացին իրավունք ունի օրենքով սահմանված կարգով փոխել իր անունը»: «Ի տեղվույն» այցելության ժամանակ Փորձագետների կոմիտեն չի տեղեկացվել այս առնչությամբ ծագած որևէ խնդրի մասին:

119. **Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է կատարված:**

Յոթերորդ 11 – Լրատվամիջոցներ

«Կետ 1

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների համար այն տարածքում, որտեղ սովյալ լեզուները գործածվում են, յուրաքանչյուր լեզվի դիրքին համաձայն և այնքանով, որքանով պետական մարմինները ուղղակիորեն կամ անուղղակիորեն իրավասու են, լիազորություն ունեն կամ որևէ դեր են խաղում այս ոլորտում, և հարգելով լրատվամիջոցների անկախության և ինքնավարության սկզբունքը, Կողմերը պարտավորվում են՝

ա. այնքանով, որքանով ռադիոն և հեռուստատեսությունը կատարում են հասարակական ծառայության առաքելություն՝

iii. ապահովել համապատասխան որոշումներ, որպեսզի հեռարձակողները առաջարկեն ծրագրեր տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով»:

120. Հայաստանում միայն պետական հեռուստատեսության և ռադիոյի ալիքներն են կատարում հանրային ծառայության առաքելությունը: Ռադիոյի և հեռուստատեսության մասին օրենքի 28-րդ հոդվածի համաձայն հանրային հեռուստատեսությունն ու ռադիոն կարող են եթերաժամ տրամադրել էթնիկական փոքրամասնություններին նրանց լեզուներով: Այս ծրագրերի ծավալը չպետք է անցնի շաբաթական մեկ ժամից հեռուստատեսությամբ և օրական մեկ ժամից ռադիոյով:

121. Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է իշխանությունների կողմից, որ 2003 թ. նոյեմբերից Հայաստանի Հանրապետությունում ապրող ազգային փոքրամասնությունների մասին հաղորդվել են ծրագրեր երկրորդ հանրային հեռուստաալիքով: Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ հանրային հեռուստատեսությամբ կա ամենօրյա 10 րոպեանոց լրատվական ծրագիր ռուսաց լեզվով: Սակայն Փորձագետների կոմիտեն որևէ կոնկրետ տեղեկատվություն չի ստացել Հայաստանի Հանրապետությունում մյուս տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին նվիրված ծրագրերի քանակի և հաղորդումների տևողության մասին:

122. Ռադիոհաղորդումների իրավիճակը լեզվից լեզու տարբերվում է:

123. Ասորերեն ծրագրեր հանրային ռադիոյով հաղորդվել են երկար տարիներ: Առաջին պարբերական զեկույցում նշվում է, որ ասորերեն ծրագրեր չեն եղել երկու տարվա ընթացքում, քանի որ չկային որակյալ մասնագետներ: «Ի տեղվույն» այցելության ժամանակ Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ ասորերեն ռադիոծրագրերը կվերականգնվեն 2005 թ.:

124. Քրդերեն և եզդիերեն ռադիոծրագրերը հեռարձակվում են օրական երեսուն րոպե յուրաքանչյուր լեզվով: Ռուսերեն ծրագրերը նույնպես կանոնավոր հեռարձակվում են հանրային ռադիոյով: Փորձագետների կոմիտեն տեղեկացված չէ հանրային ռադիոյով հունարեն ծրագրերի մասին:

125. Թվում է, որ պարտավորությունը կատարվել է գործնականում ռուսերեն, քրդերեն և եզդիերեն ռադիոծրագրերի և ռուսերեն հեռուստածրագրերի առումով: Սակայն Փորձագետների կոմիտեի համար պարզ չէ, տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով հեռուստատեսային և ռադիոհաղորդումների ժամանակը ըստ 113 կետի սահմանված է յուրաքանչյուր լեզվի համա՞ր, թե՞ բոլոր լեզուների համար միասին վերցրած: Հետևաբար Փորձագետների կոմիտեն ի վիճակի չէ եզրակացություն անել այս պարտավորության վերաբերյալ և խնդրում է իշխանություններին պարզաբանել այս հարցը իրենց հաջորդ պարբերական զեկույցում:

«բ. ii. աջակցել և/կամ հեշտացնել ռադիոծրագրերի կանոնավոր հեռարձակումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով»:

126. Այս պարտավորությունը վերաբերում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով ծրագրերի հեռարձակմանը մասնավոր ռադիոյով: Առաջին զեկույցը նշում է, որ կանոնավորապես ռուսերեն ծրագրեր են հեռարձակվում մասնավոր ռադիոյով: Սակայն մյուս լեզուների վերաբերյալ տեղեկատվություն չկա: «Ի տեղվույն» այցելության ժամանակ Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների

լեզուներով ռադիոարտոնագրերի հայտերը խրախուսելու որևէ հատուկ նախագիծ չկա, և որ առայժմ ոչ մի փոքրամասնություն չի դիմել իրավասու մարմիններին ռադիոարտոնագիր ստանալու համար: Եվ ոչ էլ ռադիոարտոնագիր ստանալու համար դիմողներն են ներառել ծրագրեր տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով: Փորձագետների կոմիտեն համարում է, որ պարտավորությունը կատարված է ռուսերենի վերաբերմամբ, բայց չի կատարված ասորերենի, եզդիերենի, հունարենի և քրդերենի վերաբերմամբ:

Փորձագետների կոմիտեն խրախուսում է իշխանություններին մշակելու նախագծեր, որոնք կհեշտացնեն ասորերեն, եզդիերեն, հունարեն և քրդերեն ռադիոծրագրերի հեռարձակումը:

«գ. ii. աջակցել և/կամ հեշտացնել կանոնավոր հեռուստածրագրերի հեռարձակումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով».

127. Այս պարտավորությունը վերաբերում է մասնավոր հեռուստատեսությամբ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով ծրագրերի հեռարձակմանը: Ռադիոյի և հեռուստատեսության մասին օրենքը ճանաչում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով ծրագրեր հեռարձակելու իրավունքը:

128. Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ մասնավոր հեռուստատեսային ընկերություններին չի կարելի պարտավորեցնել, այլ միայն խրախուսել հեռարձակելու ծրագրեր տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կամ ծրագրեր՝ նվիրված ազգային փոքրամասնությունների և տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների հետ կապված խնդիրներին :

129. Ռուսերեն հեռուստատեսային ծրագրերը կանոնավոր կերպով հեռարձակվում են մասնավոր հեռուստակայաններով: «Երևան» մասնավոր հեռուստակայանը հեռարձակում է ամենօրյա 15 րոպեանոց ծրագիր, որը վերաբերում է ազգային փոքրամասնությունների խնդիրներին: «Ի տեղվույն» այցելության ժամանակ ստացված տեղեկատվության համաձայն այդ ծրագրերը հիմնականում հեռարձակվում են ռուսերեն:

130. «Ի տեղվույն» այցելության ժամանակ Փորձագետների կոմիտեն Հեռուստատեսության և ռադիոյի պետական կոմիտեի ներկայացուցչի կողմից տեղեկացվել է, որ առայժմ ազգային փոքրամասնությունները չեն դիմել կամ մասնակցել մասնավոր հեռուստատեսային հաճախականությունների մրցույթներին, և որ ասորերեն, քրդերեն, եզդիերեն և հունարեն հեռուստածրագրերի հեռարձակումը հեշտացնելու նպատակ ունեցող որևէ հատուկ նախագիծ չկա: Փորձագետների կոմիտեն համարում է, որ պարտավորությունը կատարված է ռուսերենի վերաբերմամբ, բայց չի կատարված ասորերենի, քրդերենի, եզդիերենի և հունարենի վերաբերմամբ:

Փորձագետների կոմիտեն խրախուսում է իշխանություններին մշակելու նախագծեր, որոնք կհեշտացնեն ասորերեն, եզդիերեն, հունարեն և քրդերեն հեռուստածրագրերի հեռարձակումը:

«ե. i. աջակցել և/կամ հեշտացնել ամենաքիչը մեկ թերթի ստեղծումը և/կամ պահպանումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով, կամ»

131. Վավերացման փաստաթղթում որևէ ցուցում չկա, թե որ ենթակետն է ընտրվել՝ *ե.i* թե *ե.ii*: Երկու պարտավորությունները այլընտրանքային են, և մեկի վավերացումը բացառում է մյուսը: Առաջին գեկույցը գործ ունի *ե.i* պարտավորության հետ: Հետևաբար Փորձագետների կոմիտեն գնահատելու է այդ պարտավորության կատարումը:

132. Այս հարցում իրադրությունը լեզվից լեզու մեծապես տարբերվում է: Ասորերեն կամ հունարեն որևէ լրագիր չկա, թեև նախատեսված է հունարեն լրատվագրքույկի հրատարակումը: Եզդիերեն լույս է տեսնում մասամբ կառավարության կողմից ֆինանսավորվող լրագիր: Սակայն Փորձագետների կոմիտեի համար պարզ չէ, ինչ պարբերականությամբ է այս թերթը լույս տեսնում: Քրդերեն լրագիրը մասամբ ֆինանսավորվում է կառավարության կողմից: «Ի տեղվույն» այցելության ժամանակ Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ այս թերթը տնտեսական դժվարություններ ունի և ստիպված է նվազեցնել լույս ընծայումը շաբաթական երկու անգամից ամսական մեկ անգամի: Եթե նույնիսկ քրդերեն թերթը բովանդակության և ձևի տեսակետից նման է լրագրի, այն լույս է տեսնում միայն 4 շաբաթը մեկ, ուստի չի բնութագրվում որպես լրագիր այս պարտավորության նպատակի առումով: Կան նաև ռուսերեն հրատարակվող լրագրեր, որոնցից

առնվազն մեկը ֆինանսավորվում է կառավարության կողմից, և «Բյուզանդական Ժառանգություն» ռուսալեզու թերթը, որը հրատարակում է ռուսախոս հույների ոչ կառավարական մի կազմակերպություն: **Թվում է, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով թերթերի համար չկա աջակցության հատուկ նախագիծ: Ստացված տեղեկատվության համաձայն թերթերի հանրային ֆինանսավորումը հնարավոր է դարձել Ազգային փոքրամասնությունների կոորդինացիոն խորհրդի կողմից փոքրամասնությունների խմբերի ընդհանուր ֆինանսավորման միջոցով:**

133. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը կատարված է համարում ռուսերենի վերաբերմամբ և չկատարված՝ ասորերենի և հունարենի վերաբերմամբ: Փորձագետների կոմիտեն ի վիճակի չէ եզրակացություն անելու պարտավորության կատարման մասին եզրհերեմի և քրդերենի վերաբերմամբ, և խրախուսում է իշխանություններին ավելի շատ տեղեկատվություն տրամադրել իրենց հաջորդ պարբերական զեկույցում:

«ե. ii. աջակցել և/կամ հեշտացնել թերթային հոդվածների կանոնավոր հրատարակումը տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով»:

134. Փորձագետների կոմիտեն այս պարտավորության գնահատումը չի կատարել, տես վերը՝ *ե i* կետի վերաբերյալ:

«Կետ 2

Կողմերը պարտավորվում են երաշխավորել ռադիոյի և հեռուստատեսության հեռարձակումների անմիջական ստացման ազատությունը հարևան երկրներից այն լեզվով, որը օգտագործվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվին համարժեք կամ նույնական ձևով, և չհակառակվել տվյալ լեզվով ռադիո և հեռուստատեսային հաղորդումների վերահաղորդումներին հարևան երկրներից: Այնուհետև նրանք պարտավորվում են երաշխավորել, որ ոչ մի սահմանափակում չի լինի գրավոր մամուլում խոսքի ազատության և տեղեկատվության ազատ շրջանառության հետ կապված՝ այն լեզվով, որը գործածվում է տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզվին համարժեք կամ նույնական ձևով: Վերոհիշյալ ազատությունների իրականացումը (երբ այն իրականացվում է պատասխանատվությամբ և պարտավորություններով) կարող է ենթակա լինել նման ձևականությունների, պայմանների, սահմանափակումների կամ տուգանքների, որոնք սահմանված են օրենքով և անհրաժեշտ են ժողովրդավարական հասարակությունում ազգային անվտանգության, տարածքային ամբողջականության կամ հասարակական անվտանգության, անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության և բարքերի պաշտպանության, այլոց համբավի կամ իրավունքների պաշտպանության, գաղտնի տեղեկության արտահոսքի կանխման կամ դատավորների հեղինակության և անկողմնակալության պահպանման նպատակով»:

135. Փորձագետների կոմիտեն Հայաստանի իշխանությունների կողմից տեղեկացվել է, որ Ռադիոյի և հեռուստատեսության մասին օրենքի 10-րդ հոդվածի համաձայն արտասահմանյան ռադիո և հեռուստատեսային հեռարձակումները կարող են վերահաղորդվել Հայաստանի Հանրապետության տարածքում՝ միջպետական համաձայնագրի կամ Պետական կոմիտեի կողմից վերահաղորդողին տրված արտոնագրի հիման վրա՝ օգտվելով ոչ ավելի, քան յուրաքանչյուր կարգի համար առկա հաճախականության (VHF, UHF, FM և այլն) մեկ հիմնգերող մասից: Վերահաղորդման արտոնագրի շնորհման ընթացակարգը սահմանվում է Պետական կոմիտեի կողմից:

136. Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է կատարված:

«Կետ 3

Կողմերը պարտավորվում են երաշխավորել, որ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները գործածողների շահերը ներկայացված են կամ հաշվի են առնվում օրենքի համաձայն ստեղծված մարմինների կողմից, որոնք պատասխանատվություն են կրում լրատվամիջոցների ազատության և բազմակարծության երաշխավորման համար:

137. Փորձագետների կոմիտեի ստացած տեղեկատվությունը բավարար չէ եզրակացություն անելու պարտավորության վերաբերյալ և հետևաբար այն առաջարկում է իշխանություններից լրացուցիչ տեղեկություն տրամադրելու իրենց հաջորդ գեկույցի մեջ:

Չողված 12 – Մշակութային գործունեություն և հնարավորություններ

«Կետ 1

Այն տարածքում, որտեղ նման լեզուները գործածվում են, և այնքանով, որքանով պետական մարմինները իրավասու են, լիազորություն ունեն կամ որևէ դեր են խաղում այդ բնագավառում, հատկապես գրադարանների, տեսագրադարանների, մշակութային կենտրոնների, թանգարանների, արխիվների, ակադեմիաների, թատրոնների և կինոթատրոնների, ինչպես նաև գրական աշխատությունների և կինոնկարների արտադրության, մայրենի լեզվով մշակութային գործունեության, փառատոների և մշակութային արդյունաբերությունների, ներառյալ, inter alia, նոր տեխնոլոգիաների կիրառման առնչությամբ, Կողմերը պարտավորվում են՝

ա. խրախուսել արտահայտման ձևերը և նախաձեռնությունները, որոնք բնորոշ են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներին, ինչպես նաև զարգացնել տարբեր միջոցներ՝ այդ լեզուներով արտադրվող աշխատանքները մատչելի դարձնելու համար»:

138. Իշխանությունները ներկայացրել են մշակութային միջոցառումների մեծ թիվ, որոնք ներգրավում են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներին, ինչպես նաև համապատասխանաբար նրանց պատմությանը, մշակույթին և մշակութային կենտրոնները (ասորերենի գծով ասպիրանտուրան, Հայ-ասորական գիտամշակութային կենտրոնը Վերին Դվին գյուղում, «Աշուր» ասորական երիտասարդական կենտրոնը Երևանում, ասորերենի դասավանդման մեթոդիկայի և ասորերենի ուսուցիչների վերապատրաստման ու որակավորման Փորձագետների կոմիտեն Գիտությունների ազգային ակադեմիայում, տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով գրքեր Ազգային գրադարանում և տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների խոսողներով բնակեցված գյուղերի գրադարաններում, հունական մշակութային կենտրոնները հույներով բնակեցված գյուղերում և այլն): Մշակույթի նախարարությունը կազմակերպում է մշակութային միջոցառումներ, որոնք ներառում են ազգային փոքրամասնություններին՝ նկարչական ցուցահանդեսներ, փառատոներ ևն: Ազգային փոքրամասնությունների ամենամյա փառատոնը Երևանում նույնպես ֆինանսավորվում է Մշակույթի նախարարության կողմից և կազմակերպվում է ազգային փոքրամասնությունների խմբերի ուժերով: Բացի այդ, Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ փոքրամասնությունների խմբերի մասնակցությամբ մշակութային միջոցառումները ֆինանսավորվում են նաև տեղական և տարածաշրջանային իշխանությունների կողմից: Ռուսական պրոֆեսիոնալ թատրոնը, ինչպես նաև Թատրոնի և կինոյի ինստիտուտի ռուսական խումբը նույնպես ֆինանսավորվում են կառավարության կողմից:

139. Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ Պետությունը տրամադրում է ընդհանուր առմամբ տարեկան մոտավորապես 10 միլիոն դրամ (մոտ 16000 եվրո) ազգային փոքրամասնությունների մշակութային ոչ կառավարական կազմակերպություններին: Այս գումարը բաժանվում է տասնմեկ ազգային համայնքների միջև՝ կրթական և մշակութային գործունեությանը նպաստելու նպատակով: «Ի տեղվույն» այցելության ժամանակ փոքրամասնությունների լեզուների ներկայացուցիչները տեղեկացրել են Փորձագետների կոմիտեին, որ տրամադրված ընդհանուր գումարը խիստ փոքր է, և այդ ֆոնդերի բաշխման մեթոդը վիճելի է: Այնուհետև Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ իշխանությունները վերահսկում են նպաստի բաշխումը Կորդինացիոն խորհրդի միջոցով:

140. Փորձագետների կոմիտե ակնկալում է լրացուցիչ տեղեկատվություն ֆոնդերի բաշխման և գումարի վերաբերյալ հաջորդ պարբերական զեկույցում: Այնուամենայնիվ նա այս պարտավորությունը համարում է կատարված:

«դ. երաշխավորել, որ տարբեր տեսակի մշակութային գործունեության կազմակերպման և աջակցման համար պատասխանատու մարմինները համապատասխան թույլտվություն կտան, որպեսզի տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների և մշակույթի գիտենալը և գործածումը միավորվեն այն նախաձեռնություններին, որոնք ձեռնարկվում են նրանց կողմից, կամ որոնց համար նրանք աջակցություն են տրամադրում»:

141. Ստացված տեղեկատվության համաձայն Ազգային փոքրամասնությունների կոորդինացիոն խորհուրդը ֆոնդերը բաշխում է ազգային փոքրամասնություններին կրթական և մշակութային գործունեությանը նպաստելու նպատակով: Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է նաև, որ մի շարք մշակութային միջոցառումներ կազմակերպվել են հանրային մարմինների և փոքրամասնությունների խմբերի հետ համագործակցված:

142. Սակայն Փորձագետների կոմիտեն որևէ տեղեկատվություն չի ստացել՝ ինչպես են փոքրամասնությունների լեզուների ներկայացուցիչները ներգրավվել մշակույթի նախարարության խրախուսած կամ կազմակերպած մշակութային գործունեության մեջ: Հետևաբար Փորձագետների կոմիտեն ի վիճակի չէ եզրակացություն անելու այս պարտավորության մասին, և խրախուսում է իշխանություններին ավելի շատ տեղեկատվություն տրամադրել իրենց հաջորդ պարբերական զեկույցում:

«գ. աջակցել տվյալ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուն գործածողների ներկայացուցիչների ուղղակի մասնակցությանը մշակութային գործունեության իրականացման և պլանավորման գործում»:

143. Փորձագետների կոմիտեն բավարար տեղեկատվություն չի ստացել այս պարտավորության վերաբերյալ, ուստի չի կարող եզրակացություն անել: Նա խրախուսում է իշխանություններին ավելի շատ տեղեկատվություն տրամադրել իրենց հաջորդ պարբերական զեկույցում:

«Կետ 2

Տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուները ավանդականորեն գործածող տարածքներից տարբեր տարածքների առնչությամբ Կողմերը պարտավորվում են թույլ տալ, աջակցել և/կամ ապահովել համապատասխան մշակութային գործունեություն և հնարավորություններ, նախորդ կետի համաձայն, եթե տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուն գործածողների թիվը բավարար է »:

144. Փորձագետների կոմիտեն բավարար տեղեկատվություն չի ստացել այս պարտավորության մասին եզրակացություն անելու համար և ցանկանում է տեղեկատվություն ստանալ իշխանություններից նրանց հաջորդ պարբերական զեկույցում:

«Կետ 3

Իրենց մշակութային քաղաքականությունը արտասահմանում վարելու նպատակով Կողմերը պարտավորվում են ապահովել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները և նրանցով արտահայտված մշակույթները»:

145. Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ Հայաստանի Ռուսական թատրոնը մասնակցել է հայկական մշակույթը Ռուսաստանում ներկայացնելուն, և կողջուներ այս կարգի գործունեության լրացուցիչ օրինակները: Փորձագետների կոմիտեն համարում է, որ պարտավորությունը կատարված է ռուսերենի վերաբերմամբ: Այլ լեզուների վերաբերյալ Փորձագետների կոմիտեն բավարար տեղեկատվություն չի ստացել այս պարտավորության մասին եզրակացություն անելու համար և սպասում է տեղեկատվություն ստանալ իշխանություններից նրանց հաջորդ պարբերական զեկույցում:

Յոթերորդ 13 – Տնտեսական և հասարակական կյանք

«Կետ 1

Տնտեսական և հասարակական գործունեության բնագավառում ամբողջ երկրի տարածքում Կողմերը պարտավորվում են.

բ. արգելել ընկերությունների ներքին կանոնակարգերում և մասնավոր փաստաթղթերում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների օգտագործումը (առնվազն նույն լեզուն գործածողների մոտ) չընդունող կամ սահմանափակող որևէ կետ մտցնելը»:

146. Իշխանությունների տրամադրած տեղեկատվության համաձայն ազգային օրենսդրությունը արգելում է որևէ դրույթ, որը մերժում կամ սահմանափակում է ազգային փոքրամասնությունների լեզուների գործածությունը ընկերությունների որևէ փաստաթղթում, կանոնակարգում կամ մասնավոր փաստաթղթերում: Նշվել է նաև, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունները դիմակայում են տնտեսական և հասարակական կյանքում փոքրամասնության լեզվի գործածության խոչընդոտմանն ուղղված գործողություններին: «Ի տեղվույն» այցելության ընթացքում ոչ պետական կազմակերպությունները տեղեկացրել են Փորձագետների կոմիտեին, որ նրանք իրենց լեզվի նկատմամբ խտրականություն չեն զգացել: **Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է կատարված:**

«գ. ընդդիմանալ տնտեսական կամ հասարակական գործունեության հետ կապված՝ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների օգտագործմանը խոչընդոտող պրակտիկային»

147. Փորձագետների կոմիտեն տեղեկացված չի եղել տնտեսական և հասարակական գործունեության առնչությամբ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը խոչընդոտելուն ուղղված որևէ գործողության մասին: Սակայն ըստ երևույթին փոքրամասնության լեզվով խոսողներից շատերը այս բնագավառում գործածում են ռուսերենը կամ հայերենը:

148. Գնահատելով հանդերձ ստացված տեղեկատվությունը՝ Փորձագետների կոմիտեն խրախուսում է իշխանություններին ավելի շատ մասնավոր տեղեկատվություն տրամադրել իրենց հաջորդ պարբերական զեկույցում, հատկապես այն մասին՝ ինչպես է Հայաստանի Հանրապետությունը ընդդիմանում տնտեսական կամ հասարակական գործունեության մեջ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածմանը խոչընդոտող պրակտիկային: Այնուամենայնիվ, այդպիսի պրակտիկայի մասին զեկույցի բացակայությամբ էլ Փորձագետների կոմիտեն պարտավորությունը համարում է կատարված:

«դ. հեշտացնել և/կամ աջակցել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների օգտագործմանը վերոնշյալ ենթակետերում սահմանված միջոցներից բացի այլ միջոցներով»:

149. Իշխանությունները մատնանշել են, որ տնտեսական գործիչներից է կախված, թե որ լեզուն պետք է գործածեն, բայց որևէ տեղեկատվություն չեն տրամադրել այս առումով խրախուսման կամ հեշտացման իրենց մոտեցման մասին:

150. Փորձագետների կոմիտեն նշում է, որ այս պարտավորությունը բացում է միջոցների լայն ընտրություն, որոնցով կարելի է հեշտացնել և խրախուսել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը տնտեսական և հասարակական գործունեության մեջ: Նախատեսելիք միջոցները պետք է լինեն դրական և ոչ թե միայն վերաբերեն բացասական պրակտիկայի վերացմանն ու քննադատմանը: Նախատեսելիք միջոցները, օրինակ, կարող են լինել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածության հեշտացումը և/կամ խրախուսումը ցուցանակներում կամ բանավոր կերպով հասարակական վայրերում, ինչպես՝ երկաթուղային կայարաններում կամ օդանավակայաններում, զբոսաշրջիկության մեջ երկլեզու բրոշյուրներում, տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները իրականում գործածող ընկերությունների պարզևատրումը, երկլեզվության կամպանիայի անցկացումը և այլն:

151. Հետևաբար Փորձագետների կոմիտեն ի վիճակի չէ եզրակացություն անել այս պարտավորության մասին և խրախուսում է իշխանություններին ավելի շատ տեղեկատվություն տրամադրել իրենց հաջորդ պարբերական զեկույցում:

«Կետ 2

Տնտեսական և հասարակական գործունեության առնչությամբ, այնքանով, որքանով պետական մարմինները իրավասու են, տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուները օգտագործող տարածքում հնարավորության դեպքում Կողմերը պարտավորվում են.

բ. տնտեսական և հասարակական հատվածներում իրենց անմիջական (պետական հատված) հսկողությամբ կազմակերպել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների օգտագործումը խթանող գործունեությունները»:

152. Իշխանությունները տեղեկացրել են Փորձագետների կոմիտեին, որ իրենք պետական հատվածում կազմակերպել են փոքրամասնությունների լեզուների գործածությունը խթանող գործունեություն այդ լեզուների գործածության տարածքներում: Առաջին պարբերական զեկույցը մատնանշում է՝ որտեղ են կազմակերպվել այդ գործունեությունները, բայց բավարար տեղեկատվություն չկա այն մասին, թե ինչ է արվել:

153. Հետևաբար Փորձագետների կոմիտեն ի վիճակի չէ եզրակացություն անելու այս պարտավորության մասին և խրախուսում է իշխանություններին ավելի շատ տեղեկատվություն տրամադրել իրենց հաջորդ պարբերական զեկույցում:

գ. երաշխավորել, որ հասարակական խնամքի հիմնարկությունները (ինչպիսիք են հիվանդանոցները, ծերանոցները, հանրակացարանները) հնարավորություն կտան ընդունել և խնամել տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով խոսող անձանց, որոնք խնամքի կարիք ունեն վատառողջության, ծերության կամ այլ պատճառներով»:

154. Առաջին պարբերական զեկույցը նշում է, որ առկա են իրավական երաշխիքներ, որ հասարակական խնամքի հաստատությունները (հիվանդանոցները, ծերանոցները և հանրակացարանները) ընդունեն և խնամեն մարդկանց ազգային փոքրամասնություններից: Փորձագետների կոմիտեի համար պարզ չէ, այս երաշխիքը ներառում է նաև տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը: Փորձագետների կոմիտեն խնդրում է պարզաբանել այս հարցը հաջորդ պարբերական զեկույցում:

155. «Ի տեղվույն» այցելության ընթացքում Փորձագետների կոմիտեն տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ գործածողների տարբեր խմբերի ներկայացուցիչների կողմից տեղեկացվել է, որ բացի ռուսերենից փոքրամասնությունների լեզուները չեն գործածվում հիվանդանոցներում, հիմնականում որակյալ անձնակազմի և այդ լեզուներով բժշկական բավարար տերմինաբանության բացակայության պատճառով:

156. Փորձագետների կոմիտեն պարտավորությունը կատարված է համարում ռուսերենի վերաբերմամբ և չկատարված՝ հունարենի, եզդիերենի, ասորերենի և քրդերենի վերաբերմամբ:

Հոդված 14 . Միջսահմանային փոխանակումներ

«Կողմերը պարտավորվում են՝

ա. կիրառել գոյություն ունեցող երկկողմանի և բազմակողմանի համաձայնագրեր, որոնք իրենց կկապեն այն պետությունների հետ, որտեղ այդ լեզուն գործածվում է նույնատիպ և նույնական ձևով, կամ, եթե անհրաժեշտ է, կնքել նման համաձայնագրեր՝ այդ պետություններում միևնույն լեզվով խոսողների միջև կապերի հաստատմանը նպաստելու նպատակով՝ մշակութային, կրթական, տեղեկատվական, մասնագիտական ուսուցման և շարունակական կրթության բնագավառներում»:

157. Առաջին ազգային զեկույցի համաձայն Հայաստանի Հանրապետությունը մասնակից է Հունաստանի և Ռուսաստանի Դաշնության հետ երկկողմանի համաձայնագրին և Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ) հիմնադրման բազմակողմանի համաձայնագրին: Այս համաձայնագրերը ներառում են կապերի խթանումը համապատասխան երկրներում միևնույն լեզուն գործածողների միջև:

Փորձագետների կոմիտեին տրվեցին գործնականում այս կապերի իրագործման օրինակներ: Փորձագետների կոմիտեն չի ստացել որևէ տեղեկատվություն ասորերենի, եզդիերենի և քրդերենի վրա ազդող այդպիսի համաձայնագրի մասին:

158. **Փորձագետների կոմիտեն պարտավորությունը կատարված է համարում ռուսերենի և հունարենի վերաբերմամբ: Ասորերենի, եզդիերենի և քրդերենի վերաբերմամբ Փորձագետների կոմիտեն ի վիճակի չէ եզրակացություն անելու և կողջունի հաջորդ պարբերական զեկույցում տրվելիք լրացուցիչ տեղեկատվությունը:**

«բ. ի շահ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների՝ հեշտացնել և/կամ խթանել միջսահմանային համագործակցությունը, մասնավորապես, մարզային կամ տեղական իշխանությունների միջև, որոնց տարածքում գործում է միևնույն լեզուն նմանատիպ կամ նույնական ձևով.»

159. Միջսահմանային համագործակցություն է իրականացվում Վրաստանի և Իրանի հետ, որտեղ որոշ շրջաններ, ինչպես նաև Երևանը, ունեն «քույր» քաղաքներ: Այսպես, Հայաստանի Հանրապետության ասորական երկու գյուղեր բարեկամացել են երկու իրանական քաղաքների հետ: Սակայն ասորական փոքրամասնության ներկայացուցիչները տեղեկացրել են, որ նրանք միայն երբեմնակի շփումներ ունեն Իրանի ասորական համայնքի ներկայացուցիչների հետ: Փորձագետների կոմիտեն տեղեկացվել է, որ քրդական կազմակերպությունները շփումներ ունեն Իրաքի և Իրանի քրդերի հետ: Նույնը վերաբերում է և եզդիներին:

160. **Փորձագետների կոմիտեն այս պարտավորությունը համարում է կատարված:**

Գլուխ 3 Եզրահանգումներ

Փորձագետների կոմիտեն ստորև ներկայացնում է ընդհանուր եզրահանգումներ Հայաստանում խարտիայի կիրառման վերաբերյալ:

Ա. Փորձագետների կոմիտեն ողջունում է Հայաստանի իշխանությունների՝ խարտիայի վերաբերյալ Հայաստանի պարտավորությունները իրագործելու ջանքերը՝ հակառակ տնտեսական դժվար պայմաններին: Փորձագետների կոմիտեն նաև գովում է Հայաստանի իշխանություններին՝ փոքրամասնությունների լեզուները գործածողների հետ դրական և կառուցողական մթնոլորտ ստեղծելու համար:

Հայաստանի Հանրապետությունը նախկին ԽՍՀՄ առաջին պետությունն է, որը վավերացրել է խարտիան, և Փորձագետների կոմիտեն հուսով է, որ սա օրինակ կծառայի նաև այլ երկրների համար:

Բ. Փորձագետների կոմիտեն բավարար տեղեկատվություն չունի գնահատելու համար, արդյո՞ք ասորերենից, եզդիերենից, հունարենից, ռուսերենից և քրդերենից բացի այլ լեզուներ են ընդգրկվում խարտիայով: Տեղեկատվության կարիք կա Հայաստանում այլ տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների կարգավիճակի վերաբերյալ:

Գ. Փորձագետների կոմիտեն ընդունում և ողջունում է այն փաստը, որ Հայաստանի իշխանությունները նպաստում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով կրթության զարգացմանը հատկապես տարրական կրթության բնագավառում: Իրադրությունը ռուսերենի և հունարենի համար ընդհանուր առմամբ բավարար է: Սակայն ասորերենի, եզդիերենի և քրդերենի համար ուսուցիչների և ուսումնական նյութերի պակաս կա: Ուսուցիչների վերապատրաստումը և այս լեզուների հետազոտման և ուսուցման զարգացումը նույնպես անբավարար են, և շատ բան է մնում անելու նախադպրոցական և միջնակարգ կրթության բնագավառում:

Դ. Ներկայումս լիակատար իրավական հիմք չկա երաշխավորելու տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածությունը դատարաններում, քանի որ գոյություն

ունեցող օրենսդրությունը երաշխավորում է սեփական լեզուն գործածելու իրավունքը միայն երբ մեկը հայերեն չի հասկանում: Բայց այդ իրավունքը չի տարածվում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներով այն խոսողների վրա, ովքեր հասկանում են հայերեն:

Ե. Վարչական խնդիրների վերաբերյալ իրադրությունն ավելի լավ է: Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին նոր օրենքը իրավական հիմք է ստեղծում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների գործածության համար պետական և տեղական կառավարման մարմինների հետ ունեցած հարաբերություններում և գործնականում կա այդ լեզուների կիրառության որոշ փորձառություն:

Ձ. Լրատվամիջոցների բնագավառում իրադրությունը բավարար է ռուսերենի, բայց ոչ մյուս լեզուների վերաբերմամբ: Ներկա վիճակը անբավարար է հանրային հեռուստատեսությունում ասորերենի, հունարենի, եզդիերենի և քրդերենի համար, և չկան ասորերեն և հունարեն ծրագրեր հանրային ռադիոյով: Մասնավոր ռադիոյի և հեռուստատեսության առումով չկան նախագծեր՝ հեշտացնելու համար ասորերեն, եզդիերեն, հունարեն և քրդերեն ծրագրերի գործը:

Հայաստանի կառավարությունը հրավիրվել է մեկնաբանելու այս զեկույցի բովանդակությունը Խարտիայի Հոդված 16.3-ի համաձայն: Ստացված մեկնաբանությունները կցվում են Հավելված II-ին:

Այս զեկույցի և նրա եզրահանգումների հիման վրա Փորձագետների կոմիտեն ներկայացնում է իր առաջարկությունները Նախարարների կոմիտեին Հայաստանին ուղղվելիք հանձնարարականների համար: Միաժամանակ նա շեշտում է, որ Հայաստանի իշխանությունները, ի հավելումն այս ընդհանուր հանձնարարականների, պետք է հաշվի առնեն զեկույցի հիմնական մասում պարունակված ավելի մանրամասն դիտարկումները:

Իր 2006 թ. ... –րդ նիստի ժամանակ Նախարարների կոմիտեն ընդունել է Հայաստանին ուղղված իր հանձնարարականը, որ տրվում է սույն փաստաթղթի Բ. մասում:



Հայաստան

Վավերացման փաստաթղթի մեջ պարունակվող Հայտարարագիրը տրված է ի պահ 2002 թ. հունվարի 25-ին, բնագիրը՝ անգլ.:

Խարտիայի Հոդված 3. կետ 1-ի համաձայն Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիայում նշված իմաստով Հայաստանի Հանրապետությունում փոքրամասնությունների լեզուներն են ասորերենը, եզդիերենը, հունարենը, ռուսերենը և քրդերենը:

Ընդգրկված ժամանակաշրջանը՝ 1 / 5 / 2002 -

Վերոհիշյալ հայտարարությունը վերաբերում է Հոդված 3-ին:

Վավերացման փաստաթղթի մեջ պարունակվող Հայտարարագիրը տրված է ի պահ 2002 թ. հունվարի 25-ին, բնագիրը՝ անգլ.:

Խարտիայի Հոդված 2. կետ 3-ի համաձայն Հայաստանի Հանրապետությունը հայտարարում է, որ նա ընդունում է Խարտիայի հետևյալ կետերը ասորերենի, եզդիերենի, հունարենի, ռուսերենի և քրդերենի վերաբերյալ.

Հոդված 8. Կրթություն

Ենթակետեր՝

1.ա.iv ; 1.բ.iv ; 1.գ.iv ; 1.դ.iv ; 1.ե.iii ; 1.զ.iii.

Հոդված 9. Դատական մարմիններ

Ենթակետեր՝ 1.ա.ii, iii, iv ; 1.բ.ii ; 1.գ.ii և iii ; 1.դ.

Կետ 3

Հոդված 10. Վարչական մարմիններ և հասարակական ծառայություններ

Ենթակետեր՝ 1.ա.iv և v ; 1.բ ; 2.բ ; 2.գ ; 2.ե ; 3գ ; 4.գ.

Կետ՝ 5

Հոդված 11. Լրատվամիջոցներ

Ենթակետեր՝ 1.ա.iii ; 1.բ.ii ; 1.գ.ii ; 1.ե.

Կետեր՝ 2 և 3.

Հոդված 12. Մշակութային գործունեություն և հնարավորություններ

Ենթակետեր՝ 1.ա.դ.գ. (*)

Կետեր՝ 2 և 3:

Հոդված 13 . Տնտեսական և հասարակական կյանք

Ենթակետեր՝ 1.բ ; 1.գ ; 1.դ ; 2.բ ; 2.գ.

Հոդված 14 . Միջսահմանային փոխանակումներ

Կետեր՝ ա և բ:

[(*) Հայտարարագիրը՝ պարունակված Հայաստանի Արտաքին գործերի նախարարության 2004 թ. մարտի 23-ի թվակիր հայտագրում, փոխանցված է Հայաստանի Մշտական ներկայացուցչության կողմից 2004 թ. մարտի 31-ի թվակիր բանավոր նոտայով, գրանցված է Գլխավոր քարտուղարությունում 2004 թ. ապրիլի 1-ին - Բնագիրը՝ անգլ.:

Հայաստանի Հանրապետության Արտաքին գործերի նախարարությունը հրավիրում է Գլխավոր քարտուղարության ուշադրությունը Խարտիայի վավերացման Հայաստանի փաստաթղթում եղած տեխնիկական սխալի վրա:

Վավերացման փաստաթուղթը ի պահ հանձնելու ժամանակ թարգմանության սխալ է սպրդել, այն է՝ Հայաստանը պարտավորություն է վերցրել Խարտիայի Հոդված 12-ի վերաբերյալ, որտեղ

ընդգրկված էր գ) ենթակետը: Իրականում Ազգային ժողովի 2001 թ. դեկտեմբերի 28-ի N-247-2 որոշմամբ Հայաստանը ընդունել է Հոդված 12-ի դ) ենթակետի պարտավորությունը:]

Ընդգրկված ժամանակաշրջանը՝ 1 / 5 / 2002 -
Վերոհիշյալ հայտարարությունը վերաբերում է Հոդված 2-ին:

Հավելված II – Հայաստանի իշխանությունների մեկնաբանությունները

Բ. Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեի հանձնարարականը Հայաստանում Խարտիայի կիրառման վերաբերյալ

Նախարարների կոմիտեի RecChL(2006)..

Հանձնարարականը Հայաստանում Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ Խարտիայի կիրառման առնչությամբ

*(Ընդունված է Նախարարների կոմիտեի կողմից 2006 թ. ...
Նախարարների տեղակալների նիստում)*

Նախարարների կոմիտեն`

Տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների վերաբերյալ Եվրոպական Խարտիայի Հոդված 16-ի համաձայն,

Նկատի ունենալով Հայաստանի կողմից 2002 թ. հունվարի 25-ին ներկայացված հայտարարագրերը,

Ուշադրության առնելով Հայաստանում Խարտիայի կիրառման վերաբերյալ Խարտիայի Փորձագետների կոմիտեի տված գնահատականը,

Ուշադրության առնելով Փորձագետների կոմիտեի զեկույցի բովանդակության վերաբերյալ Հայաստանի իշխանությունների մեկնաբանությունները,

Հիշելով, որ գնահատականը հենվում է Հայաստանի ազգային զեկույցում ներկայացված տեղեկատվության, Հայաստանի իշխանությունների տրամադրած լրացուցիչ տեղեկատվության, Հայաստանում օրինականորեն հիմնված մարմինների և միությունների ներկայացրած տեղեկատվության և «ի տեղվույն» այցելության ընթացքում Փորձագետների կոմիտեի ձեռք բերած տեղեկատվության վրա,

Հանձնարարում է, որ Հայաստանի իշխանությունները պետք է հաշվի առնեն Փորձագետների կոմիտեի բոլոր դիտողությունները և որպես առաջնահերթ խնդիր.

1. բարելավել ասորերենի, եզդիերենի և քրդերենի մատուցումը կրթական բոլոր մակարդակներում, մասնավորապես երաշխավորելով ուսուցիչների համարժեք վերապատրաստումը և ուսումնական նյութերի արդիականացումը,
2. բարելավել դատարաններում տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուների կիրառումը երաշխավորող իրավական հիմքը
3. միջոցներ ձեռք առնել բարելավելու ասորերենի և հունարենի առկայությունը ռադիոյով և ասորերենի, հունարենի, եզդիերենի և քրդերենի առկայությունը հեռուստատեսությամբ,
4. պարզաբանել, Հայաստանում կա՞ն արդյոք տարածաշրջանային կամ փոքրամասնությունների այլ լեզուներ բացի Հայաստանի վավերացման փաստաթղթում նշվածներից:

Տարածաշրջանային կամ Փոքրամասնությունների Լեզուների Եվրոպական Խարտիայի 16-րդ հոդվածի համաձայն Եվրոպայի Խորհրդի Նախարարների կոմիտեին փորձագետների կոմիտեի կողմից ներկայացրած զեկույցի ՀՀ կառավարության մեկնաբանությունները

Հիմնական մեկնաբանություններ

Հայաստանյան իշխանությունները մեծ կարևորություն են տալիս Փորձագետների կոմիտեի կարծիքին և դրանք շատ օգտական համարում Խարտիայի հետագա իրագործման ընթացքում: Ուշադրության կենտրոնում է գտնվում Խարտիայի իրագործումը, որը

աջակցվում է Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիայով երկրի ստանձնած պարտավորությունների բավարարման գործընթացով:

Միաժամանակ Կոմիտեի դիտարկած որոշ խնդիրներ գրանցվել են ինչպես Հայաստանի Հանրապետության էթնիկ կազմի առանձնահատկությունների, ոչ հայ էթնիկ համայնքների փոքր թվի, դրանց ցրված բնակության պատճառով, այլև որպես հետևանք այն բանի, որ ժողովրդավարական բարեփոխումների գործընթացը դեռ ընթացքի մեջ է:

Օրինակ՝ Տեղական իրնքնակառավարման մարմինների մասին օրենքի բարենորոգումների գործընթացը և դրանց բյուջեի ձևավորման խնդիրը խոչընդոտում է այնպիսի կարևոր հարցի լուծում, ինչպիսին է նախադպրոցական ուսուցումը: Մենք ցանկանում ենք նշել, որ այս խնդիրը ակտուալ է ոչ միայն փոքրամասնությունների, այլև ողջ Հայաստանի համար:

Սահմանադրական բարենորոգումների փաթեթը ընդունվել է 2005 թվականի Նոյեմբերի 27-ի հանրաքվեով: Սահմանադրական բարենորոգումները ուղղված էին նաև Հայաստանում ազգային փոքրամասնությունների խնդիրներին: Հետևաբար Փորձագետների կոմիտեի զեկույցում նշված որոշ հարցեր և խնդիրներ կարողաբանվեն և կթարմացվեն հաջորդ ազգային զեկույցում:

Այնուամենայնիվ մենք տրամադրում ենք որոշ մեկնաբանություններ Ձեկույցի տարբեր հոդվածների Մեկնաբանություններ
 1. Հոդվածներ 9 և 11-ի մեկնաբանություններ
 Սույն աղյուսակը ներկայացնում է Հայաստանի Հանրապետության բնակչության բախշումը քաղաքներում և գյուղերում 2001թ. մարդահամարի տվյալներով

Աղյուսակ 1

	ԱԶԳՈՒԹՅՈՒՆԸ							
	Հայ	Ասորի	Եզդի	Հույն	Ռուս	Ուկրաինացի	Քուրդ	այլ
Ընդամենը	3145354	3409	40620	1176	14660	1633	1519	4640
Քաղաք	2041622	524	7413	853	10489	1386	315	3551
Գյուղ	1103732	2885	33207	323	4171	247	1204	1089

Ձեկույցում նշված է, որ եզդիախոսները զրադաշտական են: Իրականում եզդիախոսները անվանում են իրենց /իրենց կրոնը/ արևապաշտություն, մինչդեռ զրադաշտականություն նշանակում է կրակապաշտություն, և եզդիները նեղանում են իրենց այսպես կոչելու դեպքում:

2. Մեկնաբանություն զեկույցի 8-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունների իրագործման վերաբերյալ /կրթություն/

Ձեկույցի 25, 53, 54, 55, 61 և 62 հոդվածների վերաբերյալ հայտնում ենք, որ 2005 թվականի ընթացքում հրատարակվել են եզդիներենի առաջին, երկրորդ և երրորդ դասարանների դասագրքերը և ասորերենի այբբենարանը: Ուսումնական նյութերի թարմացման աշխատանքներն ընթացքի մեջ են:

Հայտնում ենք նաև, որ Բաց հասարակության ինստիտուտի աջակցությամբ հրատարակվել է նախադպրոցական և տարրական դպրոցի համար նախատեսված «Գրի և կարդա ասորերեն» ձեռնարկը:

UNICEF-ի աջակցությամբ մշակվել և մինչև 2006-ի սեպտեմբեր հրապարակվելու է ասորերենի տարրական դպրոցի դասագիրքը:

2006-ի հունվարին հրապարակվեց «Դասական ասորերեն» ձեռնարկը:

Քանի որ նոր ձեռնարկների հրապարակումը ավարտված է, 2006-ին նախատեսվել են ամբողջական դասընթացներ ասորերենի և եզդիերենի ուսուցիչների համար:

Անհրաժեշտ է պարզաբանել, որ «օպտիմալացման ծրագրում» չներգրավված 400 դպրոցներից, ներկայացված 16 «պաշտպանված» դպրոցները դա այն դպրոցներն են, որտեղ ուսուցանվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ /կից ներկայացված է այդ դպրոցների ցանկը/:

Աղյուսակ 2

Աշակերտների թվից անկախ ֆինանսավորվող՝ ազգային փոքրամասնություններով բնակեցված բնակավայրերի դպրոցների ցանկը

	Բնակավայրի անունը	Մարզը	ազգությունը
1	Թրլրկի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
2	Շամիրամի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
3	Ալազյազի դպրոց	Արագածոտնի մարզ	քրդեր և եզդիներ
4	Ռյա Թազայի դպրոց	Արագածոտնի մարզ	քրդեր և եզդիներ
5	Դերեկի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
6	Սիփանի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
7	Սանգյառի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
8	Ամրե Թազայի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
9	Շենկանիի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
10	Ջամշլուի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
11	Գետափի դպրոց	Արագածոտնի մարզ	հայեր և եզդիներ
12	Օրթաճյաի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
13	Գյալթոյի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
14	Բայսզի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
15	Բառոժի դպրոց	Արագածոտնի մարզ	եզդիներ
16	Ֆերիկի դպրոց	Արմավիրի մարզ	եզդիներ

Ինչ վերաբերում է փորձագիտական կոմիտեի անմիջական այցելության ժամանակ որոշ փոքրամասնությունների կողմից հայտնած այն կարծիքին, թե ցանկը չի ներառել բոլոր այն դպրոցները, որտեղ դասավանդվում են տարածաշրջանային կամ փոքրամասնությունների լեզուներ և որ ասորերենի դասավանդումը հատկապես կբարդանա, եթե օպտիմալացման ծրագիրը, ինչպես նախատեսվում է, շարունակվի, ապա պետք է ասել, որ խնդիրը ներկայացրել են այն ասորական գյուղերի դպրոցները, որոնք խնդիր են դնում դպրոցական կրթության լեզուն ասորիների համար պահել ռուսերենը:

Հայաստանի պարտավորությունները տարածվում են ասորիների հանդեպ ոչ թե ռուսերեն լեզուն որպես կրթության լեզու պաշտպանելու, այլև ասորերեն լեզուն՝ որպես մայրենի լեզու, և հայերենը ասորիներին սովորեցնելու՝ որպես պետական լեզու: Ռուսերենով կրթություն ստացող ասորիները երբեմն բարդություններ են ունենում ինչպես ասորերեն լեզուն բավարար տիրապետելու, այնպես էլ երկրի պետական լեզուն՝ հայերենը: Եթե ասորիները ընտրեին հայերեն և ասորերեն լեզուներով կրթությունը, ապա նրանց դպրոցների պաշտպանվածության հարցը մեխանիկորեն կլուծվեր երկրի առկա կրթական քաղաքականության ընթացքում:

Նախադպրոցական կրթական հաստատությունների հիմնման և աջակցության պատասխանատուները տեղական ինքնակառավարման մարմիններն են: Նախադպրոցական կրթական հաստատությունները կարող են ստեղծվել և գործել տեղական բյուջեի միջոցներով և հաշվետու լինեն տեղական համայնքին: Անհրաժեշտության դեպքում նրանք կարող են դիմել Կրթության նախարարություն կամ տարածքային վարչական կենտրոնների /մարզպետարանների/ կրթական բաժիններ՝ ստանալու մեթոդական աջակցություն:

Ամեն տարի Կրթության և գիտության նախարարությունը հաստատում է ազգային փոքրամասնությունների համար նախատեսված կրթական պլանը, ըստ որի որոշվում է

փոքրամասնությունների լեզուների և պատմության ուսուցման համար նախատեսված ժամաքանակը:

Ինչ վերաբերում է Փորձագետների կոմիտեի այն մտահոգությանը, թե բարձր է դպրոց չհաճախող աշակերտների տոկոսը, ուսուցիչները փոքրաթիվ են և դպրոցներ անկանոն են հաճախում, ապա ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության նախաձեռնությամբ 2004 թ. իրականացվել է մի հետազոտություն, որում մասնակիորեն վերլուծված են նաև մանկավարժական կադրերի պատասի և դպրոցական հաճախումների խնդիրը: Այժմ ընթացքի մեջ է միջոցառումների ծրագրի պատրաստումը:

Փորձագետների կոմիտեի խնդրանքն այն մասին, որպեսզի լրացուցիչ տեղեկություններ տրամադրեն մասնագիտական կրթության ոլորտում եզդիների և ասորերենի օգտագործման վրաբերյալ հայտնում ենք, որ նույնիսկ նախադպրոցական և դպրոցական կրթության մակարդակում ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչությունը զգալի ջանքեր է թափում համոզելու, որ եզդի ծնողներն իրենց երեխաներին իրենց մայրենի լեզվի ուսուցման դասերի ուղարկեն: Այս նախաձեռնությունը խոչընդոտների է հանդիպում այն պատճառով, որ եզդի ծնողները չեն տեսնում մայրենի լեզվով կրթության գործնական հեռանկարները: Իսկ ասորիների մասնագիտական կրթության ցանկությունը ռուսերեն լեզվով է, և մեր բոլոր փորձերը՝ համոզել նրանց հակառակում, կրում են անհաջողություն: Ասորիների մեծ մասն ուզում է մասնագիտական կրթություն ստանալ ռուսերեն կամ հայերեն լեզուներով:

ՀՀ կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների և կրոնի հարցերի վարչության 2004թ. նախաձեռնած հետազոտությունը նպատակ ուներ բացահայտել ասորիների, եզդիների, քրդերի և ռուսների մի մասի /մալականների/ դպրոցական կրթության պրոբլեմները և փորձել լուծել դրանք: Հետազոտությունն ի հայտ է բերել մի շարք լուծելի հարցեր և այժմ մշակվում են այն ծրագրերը, որոնք պետությունը պետք է իրականացնի այդ ոլորտում:

3. Մեկնաբանություն գեկույցի 9-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունների իրագործման վերաբերյալ /Դատական մարմիններ/ և 10-րդ /Վարչական մարմիններ և հասարակական ծառայություններ /

82-րդ կետու բարձրացված բողոքների առնչությամբ հայտնում ենք, որ դատական կամ պետական այլ կառույցներում ընթացող լսումներում արդյունավետ և գերադասելի է հայերենի՝ որպես պատական լեզվի, օգտագործումը: Եթե փոքրամասնության ներկայացուցիչը տիրապետում է հայերենին, ավելի նպատակահարմար է լսման ընթացքում օգտագործել հայերենը, հաշվի առնելով այն պայմանը, որ թարգմանությունը կարող է ոչ բոլոր դեպքերում լինել լավ որակի, քանի որ մասնավորապես այդ լեզվին լավ տիրապետով թարգմանիչներ չկան:

Այն դեպքերում, երբ նա վատ է տիրապետում հայերենին, ապա փոքրամասնության լեզվի օգտագործումը համաձայն օրենքի ընդունելի է: Փոքրամասնության ներկայացուցիչը կարող է հայտարարել, որ ցանկանում է խոսել իր /փոքրամասնության/ լեզվով, նույնիսկ եթե լավ է տիրապետում հայերենին: Այս դեպքում ոչ ոք չի կարող նրան ստիպել խոսել պաշտոնական լեզվով: Նույնիսկ էթնիկ հայերը, ովքեր հայտարարում են, որ չեն տիրապետում կամ ոչ լիարժեք են տիրապետում հայերենին կարող են խոսել իրենց համար առավել հարմար լեզվով: Այս կապակցությամբ օրենքում սահմանափակում չկա:

Ձեկույցի 98-րդ կետում նշված է, որ համաձայն Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքի 27-րդ հոդվածը սահմանում է, որ թարգմանությանը վճարվում է վարչական մարմնի կողմից: Այս ձևակերպումը ուղղման կարիք ունի, քանի որ օրենքի նշված հոդվածը տրամադրում է փոքրամասնության լեզվով փաստաթղթի թարգմանության ծառայությունը միայն այն դեպքերի համար երբ հայերեն թարգմանությունը պահանջվում է: Այլ դեպքերում թարգմանության ծախսերը հոգում է փաստաթղթեր ներկայացնող անձը: Իրականում նման խնդիր գոյություն չունի, քանի որ էթնիկ փաքրամասնությունները գիտեն պաշտոնական լեզուն և ներկայցնում են դիմումներ և համապատասխան փաստաթղթեր հայերեն լեզվով:

Վերը նշվածը վերաբերում է նաև 105 կետի ձևակերպմանը:

4. Մեկնաբանություն զեկույցի 11-րդ հոդվածով ստանձնած պարտավորությունների իրագործման վերաբերյալ / Լրատվամիջոցներ /

Հանրային ռադիոյով հեռարձակվում են քրդերեն, եզդիերեն 30 րոպեանոց ամենօրյա ռադիոհաղորդումներ :

«Մեր տունը Հայաստանն է» և «Հայաստան» անվանումներով ռուսերեն հաղորդումները հեռարձակվում են 30 րոպե:

«Մեր տունը Հայաստանն է» հաղորդումը հեռարձակվում է ամեն երկուշաբթի և պատմում է Հայաստանի ազգային փոքրամասնությունների հասարակական և մշակութային կյանքի, խնդիրների և բողոքների մասին : Հաղորդումը պատրաստվում է լեհական, հրեական, ուկրաինական և ռուսական համայնքների աջակցությամբ և ակտիվ մասնակցությամբ :

«Հայաստան» հաղորդումը հեռարձակվում է շաբաթական չորս անգամ և ներկայցնում է Հայաստանի քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացումները, ինչպես նաև Հայաստանի տարբեր ազգային համայնքներում տեղի ունեցած իրադարձությունները :